Գործնական ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար

ԻՆՉՊԵ՞Ս ՀԵՏԵՎԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՃՈՎ ՄԱԿ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

UNITED NATIONS

UNITED NATIONS
HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER

ԻՆՉՊԵ՞Ս ՀԵՏԵՎԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՄԱԿ-Ի ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Գործնական ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար

Թարգմանությունը՝ Արմեն Այվազյանի

Բովանդակություն

1. Ինչպե՞ս օգտվել այս ուղեցույցից 4

2. Ի՞նչ է հետագա հսկողությունը և ինչու՞մն է դրա կարևորությունը: 6

3. Ինչի՞ նկատմամբ կարելի է հետագա հսկողություն սահմանել 8

4. Հետագա հսկողության մեթոդներ և միջոցառումներ 11

4.1. Մեխանիզմների ընտրությունը համատեղ աշխատանքի համար 11

4.2. Ներգրավումը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության բոլոր ցիկլերում կարող է առավելագույնի հասցնել այդ մեխանիզմների ազդեցությունը 13

4.3. Մարդու իրավունքներին վերաբերող հանձնարարականների և եզրակացությունների քարտեզագրում 14

4.4. Առաջնահերթությունների սահմանում և պլանավորում 16

4.5. Հանձնարարականների կենսագործման մոնիթորինգ..... 23

4.6. Դրական իմպուլսի իրացում 28

4.7. Կոալիցիաների ստեղծում և համագործակցություն կոալիցիաների հետ 29

4.8. Գործընկերության ձևավորում 33

4.9. Տեղեկությունների տարածում և իրազեկման բարձրացում 36

4.12. Գենդերային հայեցակետի ներառումը հանձնարարականների կենսագործման հետագա հսկողություն գործընթացում 46

4.13. Ներառման, բազմազանության և հասանելիության արտացոլում 48

4.14. Հանձնարարականների օգտագործումը դատավարություններում և դատավեճերում 49

4.15. Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված միջոցառումների և լավ գործելակերպի արդյունքների տարածում 50

4.16. Ներգրավումը հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության առկա ընթացակարգերում և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների աշխատանքներում 52

5. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից ընդունված հետագա հսկողության ընթացակարգեր և գործելակերպ..... 53

5.2. Մարդու իրավունքների խորհուրդ..... 61

5.3. Հատուկ ընթացակարգեր 65

5.4. Համընդհանուր պարբերական դիտարկում..... 77

5.5. Համընդգրկուն մոտեցում 81

5.6. Ճնշամիջոցներ 81

6. Կապվե՛ք մեզ հետ 87

1. Ինչպե՞ս օգտվել այս ուղեցույցից

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի պատրաստած սույն ուղեցույցի կիզակետում դրված է այն հարցը, թե ինչպես քաղաքացիական հասարակությունը կարող է հետևել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների, մանդատակիր կազմակերպությունների կամ մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման գործընթացին: Այն ընթերցողները, ովքեր արդեն ծանոթ են նշված մեխանիզմների հիմնական առանձնահատկություններին, կարող են անդրադառնալ ՄԻԳՀԳ-ի պատրաստած «Ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար՝ աշխատանք Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցերով զբաղվող ծրագրի հետ» խորագրով հրապա-

ռակմանը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության համար նախատեսված գործնական ձեռնարկներին:[5]

Սույն ուղեցույցի 1-ից 3-րդ բաժիններում պարզաբանվում են «հետագա հսկողություն» և «կենսագործում» գաղափարները, իսկ 4-րդ բաժնում նկարագրվում են այն մեթոդներն ու գործողությունները, որոնց կարող են դիմել քաղաքացիական հասարակության դերակատարները (ՔՀԴ-ներ): 5-րդ բաժնում ուսումնասիրվում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետագա հսկողության ընթացակարգն ու գործելակերպը, ինչպես նաև ներկայացվում են այդ մեխանիզմների շրջանակներում ՔՀԴ-ների մասնակցության հնարավոր եղանակները:

Սույն ուղեցույցում մեջբերվում են նաև այն գործիքները, որոնք կոչված են ապահովել հետագա հսկողությանն ուղղված քաղաքացիական հասարակության գործողությունները: Այդ գործողությունների ցանկը բերվում է 6-րդ բաժնում:

Քննության առնելով հետագա հսկողությանն ուղղված մեթոդների ու գործողությունների ողջ բազմազանությունը և լրացնելով այն իրական կյանքից վերցված փորձով, որը սիրով տրամադրել են ՔՀԴ-ների[6] և ՄԻԳՀԳ-ի դաշտային ներկայացուցչությունները՝ սույն ուղեցույցն առաջարկում է հնարավոր տարբերակների այնպիսի ընտրանի, որից ՔՀԴ-ները կարող են իրենց ընտրությունը կատարել՝ հիմք ընդունելով սեփական առաջնահերթություններն ու կարողությունները:

Սույն ուղեցույցն առաջին հերթին նախատեսված է այն ՔՀԴ-ների համար, որոնց գործունեությունն իրականացվում է ազգային մակարդակով: Ուղեցույցը կարելի է գտնել արաբերեն, չինարեն, անգլերեն, ռուսերեն և իսպաներեն լեզուներով:

---

[5] Կարելի է գտնել այստեղ՝ www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

[6] Դեպքերի ուսումնասիրությունների ներառումը չի ենթադրում, որ դրանք արժանացել են ՄԻԳՀԳ-ի հավանության:

2. Ի՞նչ է հետագա հսկողությունը և ինչու՞մն է դրա կարևորությունը

Հետագա հսկողությանն ուղղված միջոցառումները կոչված են ապահովել մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների և մարմինների կողմից տրված հանձնարարականների և կայացված որոշումների կենսագործումը՝ նպատակ ունենալով բոլորի համար ապահովել մարդու իրավունքների պահպանման, պաշտպանության և իրացման ավելի բարձր մակարդակ:

Մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մեխանիզմներն ու մարմինները ջանում են բարձրացնել մարդու իրավունքների իրացման մակարդակն աշխարհի բոլոր երկրներում: Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված բանաձևերը, Հետաքննող հանձնաժողովների եզրակացությունները, համաձայնագրային մարմինների հանձնարարականները, հատուկ ընթացակարգերը և Համընդհանուր պարբերական դիտարկումը, ինչպես նաև առանձին դեպքերի առնչությամբ համաձայնագրային մարմինների որոշումները՝ բոլորը կոչված են լրացնել պաշտպանության հարցում եղած բացերը՝ պետություններին և այլ շահառուներին մատնացույց անելով դեպի մարդու իրավունքների լիարժեք իրացումը տանող ուղիները: Այս բոլոր եզրակացությունները, հանձնարարականները և որոշումները կոչված են դրական փոփոխություններ մտցնել իրավատերերի կյանքում: Նման փոփոխություններն իրականացնելու առաջնային պարտավորությունը դրված է պետությունների վրա, որոնք էլ կրում են մարդու իրավունքների պահպանման, պաշտպանության և իրացման պարտականությունը: Այդուհանդերձ, հասարակության բոլոր տարրերին՝ լինեն դրանք անհատներ, թե մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, միջազգային համայնք, թե ՔՀԴ-ներ, վերապահված է որոշակի դերակատարում մարդու իրավունքների իրացման գործում: Մասնավորապես, քաղաքացիական հասարակությունը կարող է առանցքային դերակատարում ունենալ մարդու իրավունքներին առնչվող հանձնարարականների կենսագործման ընթացքի հետագա հսկողության գործում:

Հետագա հսկողության փուլերի ամփոփ ներկայացում



3. Ինչի՞ նկատմամբ կարելի է հետագա հսկողություն սահմանել

Մեծ թիվ են կազմում մարդու իրավունքների հարցերով զբաղվող ՄԱԿ-ի մեխանիզմների ու մարմինների կողմից տրված եզրակացություններն ու հանձնարարականները: Քաղաքացիական հասարակությունը հետագա հսկողություն է սահմանում այն եզրակացությունների և հանձնարարականների կենսագործման վերաբերյալ, որոնք կարևոր են վերջինիս նպատակների և գործունեության համար: Դրանց շարքում կարող են ընդգրկվել.

- համաձայնագրային մարմինների եզրափակիչ դիտողություններում զետեղված հանձնարարականները, որոնք ներկայացվել են տվյալ մասնակից պետության կողմից մարդու իրավունքների մասին որևէ համաձայնագրի դրույթների իրագործումը ուսումնասիրելուց հետո,
- Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերից ստացված հանձնարարականները, որոնք ներկայացվել են համապատասխան երկրներ կատարած այցելությունների վերաբերյալ զեկույցներում, թեմատիկ զեկույցներում, ինչպես նաև առանձին դեպքերին վերաբերող հաղորդագրություններում,
- Մարդու իրավունքների խորհրդի Համընդհանուր պարբերական դիտարկումից (ՀՊԴ) բխող հանձնարարականները,
- Մարդու իրավունքների խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի բանաձևերը կամ որոշումները,
- Մարդու իրավունքների կոմիտեի օժանդակ մարմինների, օրինակ՝ Խորհրդատու կոմիտեի, բողոքների ներկայացման ընթացակարգի, Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների հարցերով զբաղվող փորձագիտական մեխանիզմի, Փոքրամասնությունների հարցերով զբաղվող ֆորումի, Սոցիալական ֆորումի, ինչպես նաև Ձեռներեցության և մարդու իրավունքների հարցերով զբաղվող ֆորումի գործունեությունը,

- հանձնարարականներ, որոնք ներկայացված են հետաքննող հանձնաժողովների, փաստահավաք առաքելությունների և Մարդու իրավունքների խորհրդի, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կամ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից ստեղծված մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հատուկ հետաքննող մեխանիզմների կողմից,
- Մարդու իրավունքների ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակի պատրաստած զեկույցներում և ուսումնասիրություններում զետեղված հանձնարարականները (օրինակ՝ դաշտային ներկայացչությունների գործունեության մասին զեկույցներ, որևէ երկրին նվիրված ուսումնասիրություններ, ինչպես նաև ստեղծված իրավիճակի մասին թեմատիկ զեկույցներ, որոնք պատրաստվել են Մարդու իրավունքների խորհրդի մանդատի ներքո),
- պետություններին կամ միջազգային համայնքին ուղղված կոչերը, որոնք ներկայացվում են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կամ մարդու իրավունքների հարցերով զբաղվող անկախ փորձագետների հանրային հայտարարություններում:

Պետության կամ քաղաքացիական հասարակության կողմից հետագա հսկողության ենթակա հանձնարարականների այս ցանկը սպառիչ չէ: ՄԱԿ-ի մեխանիզմներից բացի՝ տարածաշրջանային և ազգային մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները նույնպես ներկայացնում են զեկույցներ և հանձնարարականներ, որոնք կոչված են բարձրացնել մարդու իրավունքների իրացման մակարդակը:

Շեշտադրվող ուղղությունները որոշելիս կարևոր է հետագա հսկողության իրականացման գործընթացում զերծ մնալ մասնատված կամ հատվածական մոտեցումից: Թեև մարդու իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներն ունեն հետագա հսկողության իրենց սեփական ընթացակարգն ու գործելակերպը, որը ներկայացված է սույն ուղեցույցի 5-րդ բաժնում, այնուամենայնիվ, այս գործընթացում քաղաքացիական հասարակության հնարավոր

հավելյալ արժեքը կարող է դրսևորվել նրանով, որ որոշումների և հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության գործընթացում քաղաքացիական հասարակությունը կարող է որդեգրել համընդգրկուն մոտեցում:

Համընդգրկուն մոտեցման դեպքում գործի է դրվում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ողջ բազմազանությունը, այլ ոչ թե շեշտադրվում են դրանցից միայն մեկի հանձնարարականները: Նման մոտեցումը ենթադրում է մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներգրավումը քաղաքացիական հասարակության գործունեության բոլոր փուլերում: Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեությունը կրում է ցիկլային բնույթ, որը կարելի է պարզեցնել հետևյալ փուլերում՝ տեղեկատվության հավաքագրում, զեկույցների ներկայացում, երկխոսություն խնդրո առարկա պետության հետ, հանձնարարականների ներկայացնում և վերջիններիս կատարման գործընթացի հետագա հսկողություն:

Այսպիսով, հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության գործընթացում քաղաքացիական հասարակության աշխատանքն առավել արդյունավետ է լինում այն դեպքերում, երբ վերջինս ներգրավված է լինում ողջ գործընթացում: Թեև շարունակական ներգրավումը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության ցիկլի բոլոր փուլերում ամենայն հավանականությամբ կտա ավելի լավ արդյունքներ, այնուամենայնիվ ՔՀԴ-ները կարող են իրենց համար օգուտ քաղել մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունքներից և հանձնարարականներից, նույնիսկ եթե նրանք նախկինում ներգրավված չեն եղել այդ մեխանիզմների գործունեության մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ցիկլեր



4. Հետագա հսկողության մեթոդներ և միջոցառումներ

Այս բաժնում համառոտ նկարագրվում են քաղաքացիական հասարակության կողմից հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության համար նախատեսված որոշ մեթոդներ և միջոցառումներ, ինչպես նաև բերվում են որոշ հատկանշական օրինակներ անցյալ փորձից:

4.1. Մեխանիզմների ընտրություն համատեղ աշխատանքի համար

Ամենքի համար բոլոր մարդու իրավունքների իրացումը դրանց պաշտպանությամբ զբաղվող ՄԱԿ-ի յուրաքանչյուր մարմնի գերակա

նպատակն է: Առաջընթացը երկրների մեծ մասում պայմանավորված է մի շարք տարբեր գործոնների համադրությամբ. այդ գործոններից են՝ պատասխանատու անձանց քաղաքացիական կամքը, իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագիծը, քաղաքացիական հասարակության գործողությունները, դատարանների որոշումները և անկախության աստիճանը, տարածաշրջանային կազմակերպությունների ազդեցությունը, կառավարության կազմի փոփոխությունը և այլն: ՄԻԳՀԳ-ը և մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի այլ մեխանիզմները կարող են ստանձնել կարևոր դերակատարում՝ ուղի հարթելով հանձնարարականների կենսագործման համար:



Մեխանիզմներից ո՞ր մեկն է առավելապես ազդեցիկ: Արդյո՞ք առավելապես ազդեցիկ է համարվում հատուկ ընթացակարգերի ներքո մանդատակիր մարմնի այցելությունները որևէ երկիր:

Արդյո՞ք առավելապես ազդեցիկ են Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) շրջանակներում պետություններին հասցեագրված հանձնարարականները և դրանց առնչվող քաղաքական գործընթացները: Արդյո՞ք առավելապես ազդեցիկ է համաձայնագրային մարմնի կողմից որևէ առանձին բողոքով կայացրած որոշումը: Գուցե՞ խոսքը գնում է այս բոլորի համադրության մասին և նույնիսկ ավելին: Ինչպիսի՞ հավելյալ արժեք կարող է հաղորդել մարդու իրավունքների ապահովման մեխանիզմը քաղաքացիական հասարակության աշխատանքին մարդու իրավունքներին առնչվող որևէ թեմատիկ հարցի շուրջ և (կամ) որևէ երկրում, տարածաշրջանում կամ տարածքում:

Որքանո՞վ է համապատասխանում ներգրավումը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության մեջ ՔՀԴ-ների առաջնահերթություններին, ծրագրերին և կարողություններին:

Որևէ առանձին մեխանիզմի հնարավորությունների վերլուծությունը, ինչպես նաև դրատրված եզրակացությունների և հանձնարարականների ընկալումը կարող են առանցքային նշանակություն ունենալ հետևյալ քայլերի համար. 1) որոշումներ կայացնել նման մեխանիզմների աշխատանքում քաղաքացիական հասարակության ներգրավման մասին, 2) սահմանել նման ներգրավման ձևը, 3) նման ներգրավման հնարավորությունն ընդգրկել ՔՀԴ-ների ռազմավարություններում և աշխատանքային ծրագրերում:

4.2. Ներգրավումը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության բոլոր ցիկլերում կարող է առավելագույնի հասցնել այդ մեխանիզմների ազդեցությունը

Փորձը ցույց է տվել, որ քաղաքացիական հասարակության փոխազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետ տալիս է ավելի լավ արդյունքներ այն դեպքերում, երբ քաղաքացիական հասարակությունը ներգրավված է մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների աշխատանքային ցիկլի բոլոր փուլերում: Օրինակ՝ ՀՊԴ-ի շրջանակներում քննության առարկա դարձած պետության վերաբերյալ տեղեկություններ ներկա-

յացնելիս քաղաքացիական հասարակությունը կարող է կենտրոնանալ իր համար առավել մտահոգիչ հարցերի վրա՝ լինի դա երեխաների մարմնական պատիժ, թե էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ դրսևորվող խտրականություն: Քաղաքացիական հասարակությունը կարող է, նախ և առաջ, երկխոսություն հաստատել սեփական կառավարության հետ, իսկ այնուհետև՝ անդամ պետությունների պատվիրակությունների հետ, որոնք կմասնակցեն ՀՊԴ-ի հետ ունեցած ինտերակտիվ երկխոսությանը, ինչպես նաև կարող է վերջիններիս խրախուսել առաջարկություններ ներկայացնել հիշյալ հարցերի շուրջ: Այդ առաջարկությունները կարտացոլվեն ՀՊԴ-ի ելքային փաստաթղթում և կարող են այնուհետև օգտագործվել ազգային մակարդակով քաղաքացիական հասարակության ջատագովման աշխատանքները կամ գործունեության այլ տեսակները ամրապնդելու համար:

Նմանատիպ գործընթացներ տեղի են ունենում այլ մեխանիզմների շրջանակներում: Մտահոգիչ խնդիրների շուրջ հանգամանալից կերպով փաստագրված և հուսալի տեղեկատվության տրամադրումը բարձրացնում է այն հավանականությունը, որ այդ խնդիրները կարտացոլվեն և կշեշտադրվեն ապագա եզրակացություններում ու հանձնարարականներում: Մարդու իրավունքների հարցերով զբաղվող ՄԱԿ-ի մարմինների կողմից լավ ձևակերպված, կենսագործման առումով իրատեսական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա բացերը լրացնող հանձնարարականներն առանցքային նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության ջատագովման գործունեությունն ազգային մակարդակով ամրապնդելու համար:

4.3. Մարդու իրավունքներին վերաբերող հանձնարարականների և եզրակացությունների քարտեզագրում

Մեծ թիվ են կազմում ինչպես առանձին թեմաների շուրջ, այնպես էլ առանձին երկրների առնչությամբ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրված հանձնարարականները: Եզրակացությունների և հանձնարարականների դասակարգումն ու խմբավորումն ըստ թեմատիկ կամ աշխարհագրական հետաքրքրու-

թյան ոլորտների կարող է օգտակար նախապատրաստություն դառնալ հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության գործընթացում համընդգրկուն մոտեցում որդեգրելու համար: Հանձնարարականների և եզրակացությունների քարտեզագրումը կարող է.

- դյուրացնել հանձնարարականների հասանելիությունը,
- օգնել բարձրացնել իրազեկվածությունը և աջակցել հանձնարարականների տարածման գործում,
- օգնել կազմել առկա հանձնարարականների համընդգրկուն ամփոփ ժողովածու՝ դրանով իսկ հիմք դնելով որոշումների և հանձնարարականների կատարման հետագա հսկողության ամբողջական ռազմավարության համար,
- դյուրացնել առաջնահերթությունների սահմանումը և հանձնարարականների հետագա հսկողությունը,
- հիմք ծառայել մոնիթորինգային ծրագրի մշակման համար:

Այս գործընթացում կարող է օգտակար լինել հետևյալ գործիքը.

Մարդու իրավունքների համընդհանուր համաթիվ

Մարդու իրավունքների համընդհանուր համաթիվն[5] իրենից ներկայացնում է առցանց տվյալների շտեմարան, որում հավաքված են համաձայնագրային մարմինների, հատուկ ընթացակարգերի, ինչպես նաև ՀՊԴ-ի շրջանակներում տրված հանձնարարականները: Այս համաթիվն օգտատերերին հնարավորություն է տալիս ծանոթանալ համաձայնագրային մարմինների, հատուկ ընթացակարգերի և ՀՊԴ-ի շրջանակներում ներկայացված հանձնարարականներին, ինչպես նաև որոնումներ իրականացնել մի քանի կատեգորիաներով, ինչպիսիք են՝ պետություն, իրավունքի ոլորտ, հանձնարարականը տված մարմին, ազդեցությունը կրող անձ, ժամանակահատված, իսկ ՀՊԴ-ի պարագայում՝

[5] http://uhri.ohchr.org/

հանձնարարականը ներկայացրած պետություն(ներ), քննության առարկա դարձած պետության դիրքորոշում և նիստի համար: Մի քանի պարզ գործողությունների միջոցով համապատասխան տվյալներ որոնողները կարող են դիտարկել ՄԱԿ-ի մարմինների և մեխանիզմների գնահատականները տվյալ պարագայում մարդու իրավունքների կենսագործման կարգավիճակի վերաբերյալ: Այս հնարավորության շնորհիվ՝ մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի ունեցած տեղեկատվության հսկայական ծավալը դառնում է ավելի թափանցիկ ու հասանելի:

Հանձնարարականների խմբավորում Կենտրոնական Ասիայում

Կենտրոնական Ասիայում ՄԻԳՀԳ-ի տարածաշրջանային գրասենյակը Ղրղզստանում աջակցություն մատուցեց ակադեմիական մի հաստատության, որը պետք է խմբավորեր մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մեխանիզմների հանձնարարականներն ըստ իրավունքի տեսակի՝ ներառելով համաձայնագրային մարմինների, հատուկ ընթացակարգերի և ՀՊԴ-ի շրջանակներում ներկայացված հանձնարարականները: Այս ժողովածուն հիմք ծառայեց հանձնարարականների կենսագործման ուղղությամբ աշխատանքների պլանավորման համար:[6]

4.4. Առաջնահերթությունների սահմանում և պլանավորում

Հնարավոր է, որ որոշ ՔՀԴ-ներ առանձին հանձնարարականներ մյուսներից ավելի կարևոր համարեն: Որոշ հանձնարարականներում կարող է անդրադարձ կատարվել ՔՀԴ-ների թեմատիկ կամ աշխարհագրական առաջնահերթություններին, մինչդեռ այլ հանձնարարականներ կարող են չանդրադառնալ այդ հարցերին: Նմանապես, որոշ հանձնա-

[6] Ժողովածուն կարելի է գտնել այստեղ՝ www.auca.kg

ռարականներ կենսագործման հետագա հսկողությունը կարող է դյուրին լինել, մինչդեռ այլ հանձնարարականների պարագայում կարող են պահանջվել այնպիսի ռեսուրսներ, որոնք բացակայում են: Որոշ հանձնարարականներ կարող են ծնվել մարդու իրավունքների պաշտպանությանորևէմեխանիզմիևքաղաքացիականհասարակության իրականացրած նախապատրաստական աշխատանքների արդյունքում: Նման հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությունը, ամենայն հավանականությամբ, կկազմակերպվի ՔՀԴ-ների առաջնահերթությունների համաձայն և կընդգրկվի վերջիններիս ռազմավարություններում և աշխատանքային ծրագրերում:

Կանադայում մասնավոր դերակատարների կողմից իրականացված խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքեր

2011 թվականին Կանադայի համալսարանական կանանց դաշնության (ԿՀԿԴ) 110 ակումբներ դիմեցին Կանադայի կառավարությանը մասնավոր դերակատարների կողմից իրականացվող խոշտանգումների դեպքերը հստակ քրեականացնելու կոչով:

Կանադայի Քրեական օրենսգրքի համաձայն՝ պետության անունից հանդես եկող և խոշտանգումներ իրականացրած դերակատարները ենթարկվում են պատասխանատվության: Երբ տուժողները նույնանման խոշտանգումների են ենթարկվում մասնավոր անհատների կողմից, ինչպես, օրինակ, ընտանեկան բռնության պարագայում, ապա խոշտանգում կատարած անձինք պատասխանատվության չեն ենթարկվում «խոշտանգում» հանցատեսակի համար:

2012 թվականի ապրիլին ԿՀԿԴ-ն Խոշտանգումների դեմ կոմիտեին (ԽԴԿ) ներկայացրեց իր զուգահեռ այլընտրանքային զեկույցը: ԿՀԿԴ-ի անդամները ներկա գտնվեցին կոմիտեի մայիսյան նիստին Ժնևում: «Մենք լսեցինք, թե ինչպես կոմիտեն

հայտարարեց Կանադայի կառավարության ներկա պատվիրակներին, որ գենդերային պատկանելությամբ պայմանավորված բռնության որոշ ձևեր իրենցից ներկայացնում են խոշտանգումների դրսևորումներ, երբ դրանք կատարվում են պետության ներկայացուցիչ չհանդիսացող դերակատարների կողմից և նախատեսված են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի դրույթների ներքո: Այս հայտարարությունը բեկումնային նշանակություն ունեցավ գենդերային հավասարության, ինչպես նաև կանանց և աղջիկների՝ պետության ներկայացուցիչ չհանդիսացող դերակատարների կողմից խոշտանգումների չենթարկվելու անքակտելի իրավունքի առումով: ԽԴԿ-ի այս եզրափակիչ դիտողությունը մեծ նվաճում դարձավ մեզ համար, և մենք կարողացանք այն օգտագործել մեր աշխատանքում», նշեցին ԿՀԿԴ-ի անդամներից երկուսն իրենց մեկնաբանությունում: Անդրադառնալով կոմիտեի եզրափակիչ դիտողությունների հետագա ընթացքին՝ ԿՀԿԴ-ի հանձնաժողովը գրավոր հայտարարություն ներկայացրեց Կանանց կարգավիճակի հարցերով զբաղվող հանձնաժողովին և սատարեց Կանադայի վերաբերյալ ՀՊԴ-ի շրջանակներում ներկայացված նյութերը, որոնք հիմնված էին մասնավոր դերակատարների կողմից իրականացվող խոշտանգումների և դրսևորվող վատ վերաբերմունքի մասին ԽԴԿ-ի եզրափակիչ դիտողության դրույթների վրա:

Անկախ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության նախորդ փուլերում ներգրավված լինելու կամ չլինելու հանգամանքից՝ ՔՀԴ-ները եկան այն եզրակացության, որ առկա հանձնարարականների և եզրակացությունների առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով մարդու իրավունքների ոլորտում իրենց սեփական նպատակներից, կարևոր քայլ է դարձել հետագա հսկողության իրատեսական ծրագրեր մշակելու համար: Հան-

ձնարարականների **առաջնահերթությունը որոշելիս** ՔՀԴ-ները կարող են օգտագործել մի շարք տարբեր **չափորոշիչներ**, ինչպիսիք են՝

- մարդու իրավունքների պաշտպանության որևէ մեխանիզմի կամ մարմնի կողմից արտահայտված հանձնարարականներ, որոնք ամրապնդում են տվյալ ՔՀԴ-ների գործունեությունը,
- հանձնարարականներ, որոնք համապատասխանում են ՔՀԴ-ների նպատակներին և գործողություններին, և որոնց կենսագործման հետագա հսկողությունը հնարավոր է իրատեսաբար ընդգրկել նշված ՔՀԴ-ների աշխատանքային ծրագրերում,
- հանձնարարականներ և եզրակացություններ, որոնցով նշանավորվում է նոր առաջխաղացում մարդու իրավունքների հիման վրա կառուցված իրավական նորմերի մեկնաբանության և կիրառման ոլորտում,
- հանձնարարականներ, որոնց կենսագործմանը կարող են նպաստել մի շարք գործոններ (օրինակ՝ դրանք կարող են տվյալ պետության կողմից առաջնահերթ համարվել, միջազգային համայնքը կարող է ճնշում գործադրել և (կամ) աջակցություն ցուցաբերել, ինչպես նաև դրանց կենսագործման համար կարող են առկա լինել համապատասխան ռեսուրսներ),
- հանձնարարականներ, որոնց կենսագործման հետագա ընթացքին քաղաքացիական հասարակությունը կարող է հետևել՝ համագործակցելով այլ կոալիցիաների հետ,
- հանձնարարականներ, որոնց կենսագործումը կարող է չափագրվել այլ ՔՀԴ-ների կողմից,
- հանձնարարականներ, որոնք առանց ՔՀԴ-ների գործողությունների կմատնվեին անուշադրության,
- հանձնարարականներ, որոնք հատուկ հասցեագրված են քաղաքացիական հասարակությանը (օրինակ՝ իրավապաշտպան համայնքին հասցեագրված հանձնարարականները, որոնք ներկայացվում են մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի կողմից):

Գենդերային պատկանելությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականության բացառման թեմայով ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների առաջնահերթությունների սահմանում

ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների առաջնահերթությունների սահմանումը և նախնական աշխատանքային ծրագրի մշակումը կարելի է ամփոփ ներկայացնել հետևել կերպ՝

ՀՊԴ-ի հանձնարարական	Համարվում է առաջնահերթ	Հետագա հսկողության միջոցառումների և հիմնական գործողությունների տեսակ	Պատասխանատու կազմակերպություն(ներ) և ռեսուրսներ	Ժամկետներ	Ցուցանիշ(ներ)
Ամրապնդել օրենքով նախատեսված պաշտպանությունը խտրականությունից՝ որպես խտրականության արգելված հիմքեր ընդգրկելով սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:	Այո: Կարևոր նախնական գործողություն, որը կառավարությունը կարող է անտեսել, եթե չխրախուսվի ՔՀԴ-ների և միջազգային համայնքի կողմից:	Ձատագովման աշխատանքներ: Շահերի պաշտպանություն խորհրդարանականների շրջանում: Մասնակցել օրենսդրության նախագծման աշխատանքներին: Տեղեկատվական արշավներ:	ԼԳԲՏ կազմակերպությունների համագործակցությունը ՔՀԴ-ների հետ: Ընթացիկ գործողությունների մաս:	Մոտակա 4 տարիների ընթացքում	Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառվում են որպես արգելված հիմքեր անխտրականություն մասին օրենքներում:
Նախաձեռնել կամ միանալ հանրության իրազեկման ծրագրերին՝ խրախուսելով հանդուրժողականությունը հոմոսեքսուալ, բիսեքսուալ և տրանսսեքսուալ անձանց նկատմամբ:	Այո: Տե՛ս վերևում:	Մասնակցել արշավին: Առաջարկել երիտասարդության, ընդհանուր հանրության և իրավապահ մարմինների աշխատակիցների թիրախավորում: Թիրախային միջավայրերը՝ միջնակարգ դպրոցներ, համալսարաններ, սպորտային ակումբներ, ոստիկանության պատրաստման կենտրոններ:	ԼԳԲՏ կազմակերպությունների համագործակցությունը ՔՀԴ-ների հետ: Անհրաժեշտ է հայթայթել լրացուցիչ միջոցներ:	Մոտակա 4 տարիների ընթացքում	Արշավն իրականացվել է: Ընդգրկված ազգաբնակչության խմբերը:
Շարունակել անդրադառնալ գենդերային անհավասարության խնդրին:	Ոչ. Ձևակերպված է չափազանց անորոշ կերպով:				

ՀՊԴ-ի հանձնարարական	Համարվում է առաջնահերթ	Հետագա հսկողության միջոցառումների և հիմնական գործողությունների տեսակ	Պատասխանատու կազմակերպություն(ներ) և ռեսուրսներ	Ժամկետներ	Ցուցանիշ(ներ)
Շարունակել ամրապնդել հաստատությունները և կանխարգելիչ քաղաքականությունները, որոնք կապված են գենդերային հիմնախնդիրների և կանանց դեմ ուղղված խտրականության հետ:	Այո: Հարկավոր է խրախուսել կառավարությանն ամրապնդել հավասարության հարցերով զբաղվող հաստատությունները՝ դրանց հատկացնելով ավելի շատ ռեսուրսներ:	Մոնիթորինգ և ջատագովում: Մշտադիտարկել հավասար հնարավորությունների ապահովման նպատակով նախարարությանը հատկացված բյուջետային միջոցները: Մշտադիտարկել նախարարության կողմից առաջարկված այն նախաձեռնությունները, որոնք կառավարությունը ստանձնել և իրականացրել է:	Կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների համագործակցությունը այլ ՔՀԴ-ների հետ: Ընթացիկ գործողությունների մաս: Հարկավոր է ապահովել լրացուցիչ փորձ և գիտելիքներ բյուջեի մոնիթորինգի վերաբերյալ:	Մոտակա 4 տարիների ընթացքում	Հավասար հնարավորությունների ապահովման նպատակով նախարարությանը հատկացված բյուջետային միջոցները: Նախարարության կողմից առաջարկված և կառավարության կողմից ընդունված և իրականացված քաղաքականություններ:
Սահմանել վերջերս իրականացված իրավական բարեփոխումների առաջնահերթությունները՝ վերացնելու կանանց դեմ ուղղված խտրականական դրույթները ըստ ԿԴԽՎԿԿ-ի դրույթների:	Այո: Ժամանակն է ձևավորել անխտրականական իրավական դաշտ:	Օրենսդրության մոնիթորինգ: ԿԴԽՎԿԿ-ի եզրափակիչ դիտողությունների հետագա հսկողության մաս:	Կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների համագործակցությունն այլ ՔՀԴ-ների հետ: Ընթացիկ գործողությունների մաս:	Հաջորդ զեկույցը ԿԴԽՎԿԿ-ի շրջանակներում:	ԿԴԽՎԿԿ-ի կողմից ի հայտ բերված խտրականական դրույթները չեղյալ են համարվել:
Ձեռնարկել են թիրախային միջոցառումներ կանանց և տղամարդկանց աշխատավարձերի տարբերությունը հարթելու ուղղությամբ:	Ոչ, բայց արժանանում է ՔՀԴ-ների աջակցությանը: Հետագա հսկողությունը ՔՀԴ-ների կարողություններից դուրս է:				

ՀՊԴ-ի հանձնարարական	Համարվում է առաջնահերթ	Հետագա հսկողության միջոցառումների և հիմնական գործողությունների տեսակ	Պատասխանատու կազմակերպություն(ներ) և ռեսուրսներ	ժամկետներ	Ցուցանիշ(ներ)
Համագործակցելով քաղաքացիական հասարակության հետ՝ մշակել մանրամասն ռազմավարություն, որը կոչված կլինի վերացնել այն վնասարար մշակութային սովորույթները և խտրականական կարծրատիպերը, որոնք ուղղված են կանանց դեմ:	Այո: Այս հանձնարարականը համարվել է առաջանային և նախատեսում է հստակ դերակատարում քաղաքացիական հասարակության համար:	Մասնակցել ռազմավարության մշակմանը:	Կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների համագործակցությունը «ՄԱԿ-կանայք» կազմակերպության հետ:	Մեկ տարի	Ռազմավարություն է ընդունվել:
Ակտիվացնել ջանքերը մանկական աշխատանքի վերացման ուղղությամբ՝ բարելավելով համակարգումը երեխայի իրավունքներով զբաղվող բազմաթիվ ազգային հաստատությունների միջև:	Ոչ. Գտնվում է ՔՀԴ-ների գործունեության ոլորտից դուրս:				

4.5. Հանձնարարականների կենսագործման մոնիթորինգ

Որևէ պետության հասցեագրված հանձնարարականների կենսագործման մոնիթորինգը կարևոր ուղղություն է, որի միջոցով քաղաքացիական հասարակությունն ապահովում է կառավարության հաշվետվողականությունը: Նման մոնիթորինգի շրջանակներում կարող են ընդգրկվել այն ՔՀԴ-ները, որոնք հետևում են, թե արդյոք պետությունը վավերացրել է մարդու իրավունքներին առնչվող որևէ առանձին համաձայնագիր, արդյոք տվել է հրավեր տվյալ երկիր հատուկ ընթացակարգերի այցելության համար, արդյոք ընդունել է համապատասխան օրենք խտրականության արգելման մասին, կամ էլ մոնիթորինգի շրջանակներում կարող են ընդգրկվել այն ՔՀԴ-ները, որոնք իրականացնում են այնպիսի բարդ մոնիթորինգային գործընթացներ, որոնք կապված են միաժամանակ մի քանի վայրերում տարբեր աղբյուրներից ստացված մեծածավալ տվյալների հավաքագրման և հաստատման հետ, կամ էլ գործընթացներ, որոնք ներառում են որոշակի ժամանակահատվածում տեղեկատվություն վերլուծություն ըստ սահմանված ցուցանիշների կամ հենանիշների:

Անկախ մոնիթորինգի տեսակից, այն է՝ լինի դա հասարակ, թե բարդ մոնիթորինգ, **խիստ կարևոր է, որ մոնիթորինգի արդյունքում տրված եզրակացությունները լինեն ճշգրիտ և հուսալի**: Այս եզրակացությունները կարող են հիմք ծառայել ազգային կառավարությանը հասցեագրված ջատագովման աշխատանքների համար և կարող են մշակվել որպես մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներին ուղղված, ասել է թե՝ ՀՊԴ-ի երկրորդ և երրորդ ցիկլի շրջանակներում ներկայացվող նյութեր, որոնք ենթակա են համաձայնագրային մարմինների հետագա ուսումնասիրության՝ որպես վերջին իրադարձությունների բանավոր ներկայացում Մարդու իրավունքների խորհրդին: ՄԻԳՀԳ-ի պատրաստած «Մարդու իրավունքների մոնիթորինգի մասին ձեռնարկ»-ում[5] բերված է մանրամասն ուղեցույց մոնիթորինգի մեթոդաբանության վերաբերյալ: Նման մեթոդաբանությունը ենթադրում է տեղեկատվության ակտիվ

5 Մարդու իրավունքների մոնիթորինգի ձեռնարկ (Միավորված ազգերի կազմակերպության հրապարակում՝ HR/P/PT/7/Rev.1):

հավաքագրում, ստուգում, վերլուծություն և օգտագործում մարդու իրավունքների հետ կապված մտահոգիչ խնդիրները գնահատելու և դրանց անդրադառնալու համար:

Ըստ ներկայացված սահմանման՝ մոնիթորինգն ընդգրկում է երկար ժամանակամիջոց: Մոնիթորինգի ողջ գործընթացն անվանվում է նաև «մարդու իրավունքների մոնիթորինգի ցիկլ» (տե՛ս ստորև):

Մոնիթորինգի ցիկլ



Տեղեկատվության և տեղեկատվական նյութերի մատչելիության մոնիթորինգ Հոնկոնգի ընտրատեղամասերում

2012 թվականի սեպտեմբերին Չինաստանը, այդ թվում նաև Հոնկոնգը, դարձավ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի (ՀԱԻԿ) ուսումնասիրության առարկա: Սեփական իրավունքները պաշտպանող անձանց մի խումբ, որոնց ներկայացնում էր «Ընտրյալ իշխանություն» կազմակերպությունը, ներկա գտնվեց ՀԱԻԿ-ի կոմիտեի 7-րդ և 8-րդ նիստերին, որպեսզի տեղեկանա, թե ինչպես է Չինաստանի կառավարությունը պաշտպանում իրենց իրավունքները, իսկ ստացված փորձն օգտագործեց Հոնկոնգում ծավալվող ջատագովման իր աշխատանքներում: «Ընտրյալ իշխանություն»

կազմակերպությունն Ասիայում սեփական շահերի պաշտպանությամբ և խնդիրների ինքնուրույն լուծմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է, որը ղեկավարվում է ուսումնական տարբեր ընդունակություններ ունեցող անձանց կողմից, իսկ նրանց մասնակցությունը ժնևյան նիստերին առաջին դեպքն է, երբ կոմիտեն անդրադարձավ մտավոր հետամնացություն ունեցող անձանց խնդրին:

7-րդ նիստից հետո, երբ ընդունվեց արձանագրած խնդիրների ցանկը, «Ընտրյալ իշխանություն» կազմակերպությունը սկսեց զբաղվել մտավոր հետամնացություն ունեցող անձանց համար ընտրատեղամասերում տեղեկատվական նյութերի մատչելիության խնդրի, ինչպես նաև իրենց ընտրած օգնականի ուղեկցությամբ քվեարկության խցիկ մտնելու իրավունքի ջատագովմամբ: 2012 թվականի հուլիսին նրանք հանդիպում ունեցան Գրանցման և ընտրական հանձնաժողովի պաշտոնյաների հետ և բարձրացրեցին նշված հարցերը, այդ թվում՝ անդրադառնալով կույր կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար քվեարկության անհասանելիության, հատուկ հաստատություններում բնակվող անձանց համար քվեարկելու հնարավորության բացակայության խնդիրներին, ինչպես նաև բարձրաձայնելով այն հանգամանքը, որ «մտավոր անգործունակ» ճանաչված անձինք զրկվում են իրենց քվեարկության իրավունքներից:

Ընտրություններն անցկացվեցին 2012 թվականի սեպտեմբերին, իսկ «Ընտրյալ իշխանություն» կազմակերպության ներկայացուցիչներն իրականացնում էին ընտրությունների որոշ հայեցակետերի մոնիթորինգը: Նրանք եկան այն եզրակացության, որ կայքէջերը հասանելի չեն եղել, որ հարկավոր է եղել երկար ժամանակ սպասել քվեարկության մասին «հեշտ ընթեռնելի» ուղեցույցներն ընտրատեղամասերում կարդալու համար, իսկ երբեմն էլ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ ընտրատեղամասերում մատուցվող աջակցությունն ամբողջությամբ չէր հարգում իրենց ինքնուրույնության և գաղտնիության իրավունքը:

ՀԱԻԿ կոմիտեի ուսումնասիրությանը մասնակցելու դրական արդյունք դարձավ այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները և ՔՀԴ-ները հավաքվեցին և միավորեցին իրենց ուժերը մեկ կոալիցիայի շրջանակներում, ինչը թույլ տվեց հաշմանդամության հիմնախնդիրները ներկայացնել քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակներին: Հոնկոնգում այս կազմակերպությունները միասին աշխատեցին Մարդու իրավունքների կոմիտեին Հոնկոնգի վերաբերյալ արձանագրած խնդիրների ցանկի ներկայացման ուղղությամբ՝ դրանով իսկ իրացնելով քաղաքական գործընթացներում մասնակցելու իրենց իրավունքը և նպատակ ունենալով ավելի մեծ ճնշում գործադրել կառավարության վրա, որպեսզի վերջինս անհրաժեշտ փոփոխություններ մտցնի և ապահովի նրանց հավասար մասնակցությունը:

Մարդու իրավունքների ցուցանիշների օգտագործումը կենսագործման մոնիթորինգի շրջանակներում

Հուսալի և թափանցիկ մեթոդաբանության վրա հիմնված քանակական և որակական ցուցանիշները կարելի է օգտագործել հանձնարարականների կենսագործման մոնիթորինգի համար:

Օրինակ՝ սեռական և վերարտադրողական առողջության մասին օրենքի ընդունման մասին հանձնարարականի կատարումը ստուգելու համար որպես ցուցանիշ կարող են օգտագործվել օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվը և օրենքի գործողության ոլորտը:

Օրինակ, այս ոլորտում կարող տրվել հետևյալ հանձնարարականը. «Շարունակել աշխատանքները երկրի ողջ տարածքում անվտանգ և մատչելի հակաբեղմնավորիչ ծառայությունների հասանելիությունը բարձրացնելու ուղղությամբ»: Հակաբեղմնավորիչ միջոցներ օգտագործող կանանց և նրանց զուգընկերների տոկոսային հարաբերությունը թույլ կտա շահառուներին գնահատել տվյալ հանձնարարականի

կենսագործման աստիճանը: Հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործման վերաբերյալ տվյալները տրամադրվում են ՄԱԿ-ի Ազգաբնակչության բաժնի կողմից, որն էլ օգտվում է ներկայացուցչական ազգային ուսումնասիրությունների շրջանակներում ստացված նյութերից:

Ցուցանիշների վերաբերյալ տվյալներ հավաքագրելիս կարևոր է ստանալ ըստ համապատասխան հատկանիշների խմբավորված տվյալներ՝ դրանցում արտացոլելով ստեղծված իրավիճակի խտրականական հայեցակետերը: Եթե կազմելու լինենք նման ցուցանիշների ոչ սպառիչ ցանկը՝ կախված յուրաքանչյուր համատեքստում կիրառելի և իրատեսական գործոններից, ապա նման ցուցանիշները կարող են խմբավորվել ըստ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, տարիքի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, ֆիզիկական և հոգեկան հաշմանդամության, առողջապահական կարգավիճակի (այդ թվում՝ ըստ ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր լինելու հանգամանքի), սեռական կողմնորոշման, ինչպես նաև ըստ քաղաքացիական, քաղաքական և այլ կարգավիճակի: Համապատասխան ցուցանիշներ սահմանելուց հետո օգտակար է սահմանել նաև որոշակի հենանիշներ, որոնք կհարկադրեն պետություններին պարտավորություններ ստանձնել իրենց հասցեագրված հանձնարարականների մասով, ինչպես նաև կատարել դրանք:

«Social Watch»[6] և **«Center for Economic and Social Rights»**[7] կազմակերպություններն ունեն հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության համար նախատեսված ցուցանիշների օգտագործման մեծ փորձ:[8]

---

[6] www.socialwatch.org

[7] www.cesr.org

[8] Ցուցանիշների վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում կարելի գտնել այստեղ՝ «Human Rights Indicators - A Guide to Measurement and Implementation» (ՄԱԿ-ի հրատարակում՝ HR/PUB/12/5):

4.6. Դրական իմպուլսի իրացում

Մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի որևէ մեխանիզմի կողմից տվյալ երկրում մարդու իրավունքների ոլորտում ստեղծված իրավիճակի ուսումնասիրությունը, կամ էլ հատուկ ընթացակարգի ներքո որևէ մանդատակիր մարմնի այցելությունն այդ երկիր, կարող է դրական իմպուլս հաղորդել որոշակի գործընթացներին, ինչպիսիք են՝

- լրատվամիջոցների աննախադեպ ուշադրությունը մարդու իրավունքների շուրջ ստեղված իրավիճակի նկատմամբ,
- պետական մարմինների պատրաստակամությունը մարդու իրավունքների ոլորում առկա որոշ խնդիրներին կենտրոնական և տեղական մակարդակով անդրադառնալու առումով,
- իշխանությունների անունից հանդես եկող այնպիսի նոր զրուցակիցների առկայությունը, ովքեր պատրաստ են քաղաքացիական հասարակության հետ երկխոսություն հաստատել,
- մարդու իրավունքների առաջխաղացմանն ուղղված միջոցառումների անցկացում նոր թափով,
- մարդու իրավունքների չափանիշներին համապատասխանող օրենսդրություն ընդունելու քաղաքական կամքի դրսևորում,
- որևէ առանձին ոլորտում անցկացվող աշխատանքների համար նախատեսված նոր ռեսուրսների առկայություն,
- տվյալ ուսումնասիրության համար ստեղծված կամ ամրապնդված գործընկերություններ և կոալիցիաներ:

ՔՀԴ-ները կարող են կարևոր դեր խաղալ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեության շուրջ դրական իմպուլս ստեղծելու գործում և օգտվելով նման հնարավորություններից՝ կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանության ավելի բարձր մակարդակ ապահովող ռազմավարությունների ստեղծմանը:

4.7. Կոալիցիաների ստեղծում և համագործակցություն կոալիցիաների հետ

ՔՀԴ-ների կոալիցիաների մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործունեությանը հաճախ տվել է դրական արդյունքներ: Նման արդյունքների օրինակներից են.

- Առավել ընդգրկուն նյութերի ներկայացում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներին, ինչի արդյունքում մեծանում է այն հավանականությունը, որ հանձնարարականներում կարտացոլվեն կոալիցիայի կողմից սահմանված առաջնահերթությունները:
- Աշխատանքի բաժանում անդամ կազմակերպությունների միջև ըստ ունեցած մասնագիտացման, ռեսուրսների և փորձի, ինչն արդյունքում ապահովում է առավել արդյունավետ մասնակցություն և հանձնարարականների կենսագործման հետագա հսկողություն (օրինակ՝ որոշ կազմակերպությունների գործունեության կենտրոնում կարող են դրվել ջատագովման և իրազեկման բարձրացման աշխատանքները, մյուսների դեպքում՝ տվյալների, այդ թվում տեխնիկական տվյալների և տեղեկությունների հավաքագրումն ու վերլուծությունը, մինչդեռ այլ կազմակերպություններ կարող են աջակցություն մատուցել մարդու իրավունքների խախտումներից տուժած անձանց՝ օգնելով նրանց բարձրաձայնել սեփական խնդիրները և ներկայացնել իրենց վկայությունները):
- Ավելի լավ աշխատանքային հարաբերություններ, համագործակցություն և համերաշխություն ՔՀԴ-ների միջև: Սա առանձնապես կարևոր է, երբ ՔՀԴ-ները հայտնվում են վտանգի տակ:
- Իր միասնական ուղերձի և նպատակի շնորհիվ կոալիցիան վայելում է ավելի մեծ ազդեցություն և արժանահավատություն մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների, պետական մարմինների և այլ շահառուների (օրինակ՝ դիվանագիտական առաքելությունների, մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների) մոտ:
- Փոքր ՔՀԴ-ներին հաջողվում է ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց բարձրացրած խնդիրներին, երբ դրանք ներկայացվում են կոալիցիաների միջոցով:

Ֆիլիպիններում ՀՊԴ-ի միջոցով ՔՀԴ-ների կոալիցիան առաջընթաց է արձանագրում խոշտանգումների կանխարգելման գործում

«Բժշկական գործողությունների խումբ» (ԲԳԽ) կազմակերպությունը մասնակցել է Քաղաքացիական հասարակության համատեղ զեկույցի պատրաստմանը, որը նախատեսված էր Ֆիլիպիններին անդրադարձող ՀՊԴ-ի համար: 2012 թվականի մայիսին ՀՊԴ-ի անցկացումից առաջ ՔՀԴ-ների կոալիցիայի անդամները Մանիլայում կազմակերպեցին դիվանագիտական ճեպազրույց, որին ներկա գտնվեց շուրջ 20 դեսպանությունների ներկայացուցիչ: Ժնևում կոալիցիան հանդիպումներ ունեցավ 16 դիվանագիտական առաքելությունների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածությունն իրենց մտահոգող հարցերի շուրջ: «Մենք հնարավորություն ունեցանք հայտնել մեր առաջնահերթ մտահոգությունները կոնկրետ և հակիրճ եղանակով՝ ներկայացնելով յուրաքանչյուր խնդիրը մեկ թերթի վրա բերված փաստերի տեսքով», նշեցին կոալիցիայի անդամները: «ՀՊԴ-ի գործընթացի շրջանակներում զեկույցի համար նյութեր ներկայացնելու և կառավարությունում սեփական շահերը որպես ՔՀԴ-ների միասնական կոալիցիա պաշտպանելու շնորհիվ ստացվեցին առավել առարկայական հանձնարարականներ: Այս իրողությունը դյուրացրեց ինչպես հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությունը, այնպես էլ մեր ակտիվ ներգրավումը կառավարության կողմից դրանց կենսագործման գործընթացում»:

Ֆիլիպինների «ԲԳԽ» կազմակերպությունը և «Միավորում ընդդեմ խոշտանգումների» կոալիցիան (ՄԸԽԿ) նեկայումս օգտագործում են ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականները խոշտանգումների կանխարգելման ուղղությամբ տարվող իրենց աշխատանքը սատարելու նպատակով: «Մենք օգտագործում ենք ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականները մոնիթորինգի և ջատագովման մեր աշխատանքներում, որոնց շրջանակներում շեշտադրվում է խոշտանգումների բժշկական հայեցակետերը, այդ թվում՝ Ստամբուլի արձանագրության վրա հիմնված փաստաթղթերի ներկայացումը

հանրությանը, ինչպես նաև օգտագործում ենք այդ հանձնարարականները՝ խոշտանգումներից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների համար վերականգնման ծրագրերի ստեղծման նպատակով: ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականները բազմապատկիչ ազդեցություն ունեցան՝ մեծացնելով Ֆիլիպիններում խոշտանգումների կանխարգելման շարժում ձևավորելու ներուժը», եզրակացրեց ԲԳԽ-ի ներկայացուցիչը:

Շվեյցարիայում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների գծով հանձնարարականների կենսագործման ճանապարհային քարտեզ

«Ֆրանսախոս Շվեյցարիայի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոալիցիա» կազմակերպությունը մեկնարկ տվեց Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի կողմից Շվեյցարիայի վերաբերյալ տրված եզրափակիչ դիտողությունների կատարման հետագա հսկողության գործընթացին: Եզրափակիչ դիտողություններում արտացոլված և տարբեր ոլորտներում մասնագիտացած ՔՀԴ-ներին այդ կազմակերպությունն առաջարկեց պարզաբանել, թե ինչ է պահանջվելու հանձնարարականներից յուրաքանչյուրը կյանքի կոչելու համար: Բոլոր առաջարկությունների հիման վրա կազմվեց հստակ մի ուղեցույց, որը ներկայացվեց և քննարկվեց պետական պաշտոնատար անձանց հետ կլոր սեղանի շուրջ ունեցած խորհրդակցությունների ընթացքում:

Թեև փորձը վկայում է, որ կոալիցիաների հետ համագործակցությունը, ընդհանուր առմամբ, տվել է լավ արդյունքներ, սակայն անցյալից քաղված դասերը մատնանշում են նաև որոշ տարածված մարտահրավերներ, որոնցից են՝

- համակարգման աշխատանքում ներգրավված ռեսուրսներն ու ժամանակը,
- առաջնահերթությունների և դերակատարումների համաձայնեցումը,

- դրական իմպուլսի և նպատակասլաց մոտեցման պահպանումը կոալիցիայի կազմում,
- փոխհամաձայնության ձեռքբերման համար կարող է պահանջվել որոշ խնդիրների լուծում:

Պայքար ռասայական խտրականության դեմ Ճապոնիայում

Ռասայական խտրականության վերացման հարցերով զբաղվող ՀԿ-ների ցանցը (ՌԽՎ ցանց) ձևավորվել է 2007 թվականին ռասիզմի ժամանակակից ձևերի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության հարցերով հատուկ զեկուցողի 2005 թվականին այդ երկիր կատարած այցելությունից հետո: Խտրականության և ռասիզմի բոլոր ձևերի դեմ ուղղված միջազգային շարժման (ԽՌԲՁՇ) աջակցությամբ՝ ՌԽՎ ցանցն աշխատել է Ճապոնիայում Ռասայական խտրականության վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) կենսագործման ուղղությամբ: ՌԽՎ ցանցը ներկայացրեց Ճապոնիային նվիրված զուգահեռ այլընտրանքային զեկույց Ռասայական խտրականության վերացման կոմիտեին (ՌԽՎԿ): 2010 թվականի փետրվարին ՌԽՎ ցանցի պատվիրակները ներկա գտնվեցին ՌԽՎԿ-ի նիստին և անցկացրեցին ճեպազրույց: 2010 թվականի օգոստոսից մինչև 2012 թվականի հունիսն անցած ժամանակահատվածում ցանցը մի շարք խորհրդակցություններ անցկացրեց կառավարության հետ և աշխատաժողովներ կազմակերպեց խորհրդարանի անդամների համար՝ հիմք ընդունելով ՌԽՎԿ-ի եզրափակիչ դիտողությունները: «Այս գործողությունները մեզ թույլ տվեցին կատարելագործել ջատագովման մեր հմտություններն ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ազգային մակարդակներով: Դրա շնորհիվ ամրացան նաև մեր համագործակցային հարաբերությունները», նշեց ՌԽՎ ցանցի անդամներից մեկը: «Բացի այդ, տվյալ փորձը մեզ հնարավորություն ընձեռեց լրատվամիջոցները դիտարկել որպես լրացուցիչ մի ոլորտ, որում մենք ցանկանում ենք մեզ առավել ակտիվ դրսևորել: Անշուշտ, օգտակար կլինի հրավիրել լրատվամիջոցների ուշադրությունն այն հարցին, թե ինչպես են միջազգային մեխանիզմները դիտարկում Ճապոնիայում մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակը»:

4.8. Գործընկերության ձևավորում

Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության և մարդու իրավունքների իրացման ուղղությամբ գործընկերների հետ համատեղ աշխատանքը կարող է ունենալ ռազմավարական նշանակություն:

Նախկին փորձը ցույց է տվել, որ մասնակցությունը ՄԱԿ-ի մարդու իրավունքների գործընթացներին կարող է սերմանել ՔՀԴ-ների միջև նոր գործընկերության և համագործակցության հնարավորություններ: Ժամանակին օգտվելով նման հնարավորություններից և առավելագույնս իրացնելով դրանք՝ կարելի է բազմապատկել ակնկալվող արդյունքները: Գործընկերություններ հաստատելիս էական նշանակություն ունի գործընկերների բազմազանությունը և բոլոր տեսանկյունների արտացոլումը:

Աշխատանքը գործընկերների հետ կարող է իրականացվել բազում մակարդակներով, այն է՝ որոշ գործընկերներ կարող են նույնանման նպատակներ հետապնդել, ուրիշները կարող են ունենալ համապատասխան ռեսուրսներ, հատուկ հմտություններ կամ կապերի լայն ցանց, մինչդեռ մնացածները կարող են իրենց վրա կրել որոշ առանցքային գործառույթներ կամ ազդել առանցքային գործառույթներ կրող անձանց կամ մարմինների վրա:

Առանցքային դերակատարների գործառույթների և նրանց հնարավոր ներդրումների, ինչպես նաև ռիսկերի և սպառնալիքների քարտեզագրումը հիմք է ծառայում ռազմավարության մշակման և համապատասխան դերակատարների նշանակման համար: Եթե կազմելու լինենք նման գործընկերների ոչ սպառիչ ցանկ, ապա կարելի է նշել, որ ՔՀԴ-ները գործընկերության և համագործակցության տարբեր ձևերի փորձ ունեն հետևյալ գործընկերների հետ.

- տարբեր մակարդակներով և զանազան ոլորտներում գործող ՔՀԴ-ներ՝ սկսած համայնքահեն կազմակերպություններից մինչև ազգային և միջազգային ՔՀԴ-ներ,
- նվիրատու կազմակերպություններ և դիվանագիտական համայնք,

- լրատվամիջոցներ,
- արհմիություններ և մասնագիտական միավորումներ,
- որոշակի թեմայի շուրջ ձևավորված ցանցեր,
- պետական կառույցներ, այդ թվում՝ խորհրդարաններ և համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներ,
- մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային հաստատություններ,
- միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի և ՄԻԳՀԳ-ի դաշտային ներկայացուցչություններ,
- ակադեմիական հաստատություններ,
- մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ:

Գործընկերների մոբիլիզացում՝ Նեպալում երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման նպատակով

Նեպալում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը ՀՊԴ-ին նվիրված դասընթացներ անցկացնեց 138 ՔՀԴ-ների համար: Կազմակերպությունը սատարեց շահառուների կողմից համապատասխան նյութերի ներկայացումը, ինչպես նաև համակարգեց ջատագովման աշխատանքներն ազգային և միջազգային մակարդակով: Արդյունքում, ՀՊԴ-ի ելքային փաստաթղթում ներկայացվեց երեխայի իրավունքներին նվիրված 34 հանձնարարական, որոնցից 31-ն ընդունվեց Նեպալի կառավարության կողմից:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության իր ռազմավարությունը կառուցեց զանազան ազգային շահառուների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ցանցերի, Մարդու իրավունքների հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի, դեսպանությունների և լրատվամիջոցների մոբիլիզացման շուրջ՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՊԴ-ի գործընթացի նկատմամբ ազգային հանձնառության մակարդակը, ինչպես նաև խթանել ներգրավումն ու հաշվետվողականությունը:

ՀՊԴ-ն կարևոր դերակատարում ունեցավ գործողությունների ընդհանուր օրակարգի շուրջ Նեպալի ՔՀԴ-ների համախմբման հարցում: Գործի դրվեց միջոցառումների մի ողջ համադրություն, որն ընդգրկում էր պետական պաշտոնյաների ու դեսպանությունների հետ բարձրաստիճան երկկողմ հանդիպումներ ջատագովման համատեղ նախաձեռնությունների շուրջ, ինչպես նաև իրազեկման բարձրացման աշխատանքներ լրատվամիջոցների, այդ թվում՝ հեռուստատեսային հարցազրույցների և մամուլում ՀՊԴ-ի վերաբերյալ հոդվածների օգնությամբ: Լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրելու առումով առանձնապես արդյունավետ է եղել ՀՊԴ-ի շաղկապումը երեխաներին առնչվող առանձին իրադարձությունների, օրինակ՝ Երեխայի իրավունքների օրվա հետ:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը, համագործակցելով երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կոալիցիաների հետ, կարևոր դերակատարում ստանձնեց՝ կոչ անելով Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովին (ՄԻԱՀ) իր մանդատի շրջանակներում ներառել ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների մոնիթորինգն իրականացնելու և դրանց կենսագործման հետագա ընթացքին հետևելու գործառույթները: ՄԻԱՀ-ին վերապահված է կարևորագույն գործառույթ, այն է՝ ապահովել հանձնարարականների կենսագործման կարգավիճակի վերաբերյալ հեղինակավոր և հուսալի տեղեկատվության առկայությունը:

Հանձնարարականների կատարման հետագա հսկողության ուղղությամբ համակարգված աշխատանքների արդյունքում ՀՊԴ-ում զետեղված թիվ 108 հանձնարարականի 4-րդ կետը, որով կոչ է արվում «*ընդունել երկար սպասված երեխաների մասին քաղաքականության օրենսդրական նորմերը, այդ թվում «Երեխայի իրավունքների մասինե օրենքը, կրթության մասին կանոնակարգը, երեխաների պաշտպանության քաղաքականությունը, ինչպես նաև մանկատների նվազագույն չափանիշները*», մասնակիորեն կենսագործվել է: 2012 թվականին ընդունվեց ինչպես Երեխաների ազգային քաղաքականությունը, այնպես էլ մանկատների համար նախատեսված համալիր չափանիշները: Կառավարությունը հաստատեց նաև «Երեխայի իրավունքների մասին» օրենքի նախագիծը:

Գործընկերների հետ իրականացվող համագործակցությունը կարելի է քարտեզագրել պատկերավոր միջոցներով: Օրինակ՝ Նեպալի վերը շարադրված փորձը կարելի է պատկերավոր ներկայացնել ստորև բերված գծապատկերի տեսքով:

Գործընկերների մոբիլիզացում Նեպալում երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման նպատակով



4.9. Տեղեկությունների տարածում և իրազեկման բարձրացում

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրված եզրակացությունների և հանձնարարականների մասին տեղեկությունների տարածումը և իրազեկման բարձրացումն օգտակար միջոցներ են պետությունների կողմից մարդու իրավունքների գծով ստանձնած պարտավորությունների կենսագործումը խթանելու համար:

Շատ դեպքերում հանձնարարականների կենսագործումը հնարավոր է դառնում այն բանի շնորհիվ, որ իրավատերերի ավելի մեծ թիվ է ճանաչում և պահանջում դրանք, կամ էլ այն պատճառով,

որ համապատասխան մարմիններն իմանում են, թե ինչպիսի միջոցառումներ են նրանցից ակնկալվում մարդու իրավունքների գծով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու համար: Իրազեկման բարձրացմամբ և տեղեկատվության տարածմամբ մարդու իրավունքների թեմայի շուրջ գիտելիքների եղած բացերի լրացնելը կամ պակասեցնելը հանձնարարականների կենսագործմանը նպաստող արդյունավետ միջոց է:

ՔՀԴ-ները ցուցաբերում են հնարամիտ և ստեղծագործ մոտեցումներ՝ թարգմանելով տեղի լեզուներով լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում տեղ գտած տեղեկատվական արշավների նյութերը, ինչպես նաև տեղեկություններ տարածելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրված եզրակացությունների և հանձնարարականների վերաբերյալ: Համապատասխան նյութերի և տեղեկատվության տարածման ծրագրերում հարկավոր է միշտ հաշվի առնել դրանց մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Տեղեկատվության հասանելիության մասին» օրենքի գործածումը Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթահանձնաժողովի կողմից Բրազիլիային տրված հանձնարարականների հրապարակման համար

2011 թվականին Բրազիլիա կատարած իր առաջին այցելության ժամանակ Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթահանձնաժողովը (ԽԿԵ) քննության առավ երկրի կալանավայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի հետ կապված իրավիճակը: Այնուհետև, ԽԿԵ-ն պատրաստեց և Բրազիլիայի կառավարությանը ներկայացրեց մի զեկույց, որում անդրադարձավ երկրում արձանագրած խոշտանգումների դեպքերին: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (ԿԱԽԴԿ) կից կամընտիր արձանագրության համաձայն՝

զեկույցը ներկայացվում է հանրությանը, միայն եթե կառավարությունն այդ մասին համապատասխան որոշում է կայացնում: Չնայած քաղաքացիական հասարակության պահանջներին՝ զեկույցը պահվեց գաղտնի:

2012 թվականի մայիսին ընդունվեց «Հանրային տեղեկատվության հասանելիության մասին» օրենքը: Այդ օրենքի ուժի մեջ մտնելու օրը «Conectas Direitos Humanos» (Conectas) կազմակերպությունը դիմեց Բրազիլիայի կառավարությանը՝ պահանջելով հրապարակել և հասանելի դարձնել ԽԿԵ-ի պատրաստած զեկույցը: Օրենքով սահմանված ժամկետներում Բրազիլիայի կառավարությունն արձագանքեց և Մարդու իրավունքների նախարարության կայքէջում հրապարակեց ինչպես զեկույցը, այնպես էլ համապատասխան հանձնարարականները, այդ թվում՝ դրանց պորտուգալերեն թարգմանությունը:

«Conectas» կազմակերպությունն առանձնակի կարևորություն էր դարձնում նրան, որ ԽԿԵ-ի զեկույցը հրապարակվի այդ երկրի պետական լեզվով: Եթե ԽԿԵ-ի զեկույցը չհրապարակվեր, քաղաքացիական հասարակության դերակատարները և այլ շահառուները չէին կարողանա մշտադիտարկել դրանում զետեղված հանձնարարականների կենսագործումը: «Սա նաև բեկումնային քայլ դարձավ երկրում խոշտանգումների շուրջ ձևավորված լուրջ իրավիճակի մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշտանգումների տարածումը Բրազիլիայում ուղղակիորեն պայմանավորված է կանխարգելիչ քաղաքականությունների բացակայությամբ, և առաջին հերթին հանցագործների պատասխանատվության կանչելու լծակների պակասով, հետևաբար, «Տեղեկատվության հասանելիության մասին» օրենքն արդյունավետ միջոց դարձավ, որը կարող էր երաշխավորել, որ ԽԿԵ-ի գնահատումը կներկայացվի հանրությանը և կարող է այժմ օգտագործվել բոլոր շահառուների կողմից խոշտանգումների դեմ պայքարելու գործումե, իր մեկնաբանությունում նշեց «Conectas» կազմակերպությունը:

Խոշտանգումների դեմ կոմիտեի նիստի համացանցային հեռարձակում Իռլանդիայում

2011 թվականին Իռլանդիայի քաղաքացիական ազատությունների խորհուրդը (ԻՔԱԽ) և Քրեակատարողական համակարգի բարեփոխումների հավատարմագրային հիմնադրամը (ՔՀԲՀՀ) համատեղ ուժերով պատրաստեցին զուգահեռ այլընտրանքային զեկույց Իռլանդիայի վերաբերյալ, որը ներկայացվեց Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի (ԽԴԿ) կողմից այդ երկրի առաջին քննության շրջանակներում: ԻՔԱԽ-ը և ՔՀԲՀՀ-ն, հանդես գալով խոշտանգումների զոհերի վերականգնման միջազգային խորհրդի հետ (ԽՁՎՄԽ) միասին, կազմակերպեցին ԽԴԿ-ի նիստի առաջին կենդանի համացանցային հեռարձակումը, որը ցուցադրվեց մի շարք ՔՀԴ-ների և օրենսդրական մարմինների կողմից Իռլանդիայում:

««Զուգահեռ այլընտրանքային զեկույցն ու ԽԴԿ-ի հանձնարարականները լայն տարածում ստացան և լուսաբանվեցին բոլոր խոշոր թերթերում և ռադիոհաղորդումներում: Լավագույն եթերային ժամանակում հեռարձակվող մի հեռուստահաղորդման շրջանակներում ցուցադրվեցին Իռլանդիայի գործի քննության մեր համացանցային հեռարձակումից վերցված տեսանյութեր: Իռլանդիայի հանրությունն առաջին անգամ տեսավ ՄԱԿ-ի համաձայնագրային մարմնի աշխատանքը», իր մեկնաբանությունում նշեց ԻՔԱԽ-ի ներկայացուցիչը:

ԽԴԿ-ի կողմից Իռլանդիայի գործի քննությունը և դրանից բխող հանձնարարականները նպաստեցին Իռլանդիայում արձանագրած աստիճանական փոփոխություններին: Քրեակատարողական հիմնարկների բարեփոխումներն ունեն ավելի բարձր քաղաքական ենթատեքստ, ուստի և հատուկ այդ նպատակով ստեղծվեց Քրեակատարողական ռազմավարության վերանայման խումբ:[9]

[9] Արդարադատության, հավասարության և պաշտպանության նախարարի կողմից հրավիրվող Քրեակատարողական ռազմավարության վերանայման խումբը բաղկացած է 12 փորձագետներից, որոնք ներկայացնում են դատաիրավական համակարգը, ոստիկանությունը, պայմանական դատապարտման համակարգը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակազմը: Խումբը հանձնարարականներ է ներկայացնում

Կոմիտեն պահանջեց 12 ամսվա ընթացքում հետագա հսկողություն սահմանել 4 առանձին հանձնարարականների նկատմամբ, այդ թվում՝ անդրադառնալով այն հանգամանքին, որ պետությանը չէր իրականացրել պատշաճ հետաքննություն «Մագդալենայի լվացքատներ» անվանումը կրող ապաստարաններում կանանց կալանավորման դեպքերի կապակցությամբ: 2013 թվականի փետրվարին հրապարակվեց **պաշտոնական զեկույց**, որը նվիրված էր «Մագդալենայի լվացքատներ» անվանումը կրող ապաստարանների գործունեությունում պետության մասնակցության թեմային:[10] Զեկույցին հաջորդեց պետության պաշտոնական ներողությունը, որը հասցեագրված էր Մագդալենայի ապաստարաններում կալանավորված կանանց, ինչպես նաև առաջարկվեց վնասի փոխհատուցման ծրագիր:

Համացանցային հեռարձակում և տեսահոլովակներ

Մարդու իրավունքների խորհրդի և Համընդհանուր պարբերական դիտարկման նիստերը ներկայացվում են ուղիղ համացանցային հեռարձակմամբ և այնուհետև պահվում են ՄԱԿ-ի **UN web TV** կայքէջի արխիվում:[11] Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն ունեն տեսագրել և առցանց հեռարձակել համաձայնագրային մարմինների նիստերը: Ժնևում տեղակայված հասարակական կազմակերպությունների մի խումբ համակարգում է համաձայնագրային մարմինների բոլոր նիստերի համացանցային հեռարձակումը:

www.treatybodywebcast.org.

ՄԻԳՀԳ-ի կողմից պատրաստված բազմաթիվ **տեսահոլովակներ** կարելի է գտնել ՄԻԳՀԳ-ի կայքէջում, ինչպես նաև սոցիալական ցանցերում:[12]

է՝ խթանելով սկզբունքային և կայուն քրեակատարողական համակարգի կայացումը, այդ թվում՝ հաշվի առնելով Իռլանդիայի ստանձնած միջազգային պարտավորությունները: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս www.justice.ie

[10] Զեկույցը կարելի է գտնել այստեղ՝ www.justice.ie

[11] http://webtv.un.org/

[12] Սոցիալական ցանցերում ՄԻԳՀԳ-ի գործունեության վերաբերյալ տե՛ս www.ohchr.org

4.10. Ջատագովման աշխատանքներ

Մարդու իրավունքների ջատագովումը կարելի է սահմանել որպես հաղորդակցում, որը նպատակ ունի բարելավել մարդու իրավունքների իրացումը: Ջատագովման արդյունավետ ուղերձները կոչված են **տեղեկացնել** մարդու իրավունքների շուրջ ստեղծված իրավիճակի և համապատասխան մտահոգության մասին՝ նպատակ ունենալով **համոզել** և **գործողության դրդել**:

Մարդու իրավունքների արդյունավետ ջատագովման ուղերձներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ուղերձները պետք է հիմնված լինեն ստուգված փաստերի և թվերի վրա,
- ուղերձները պետք է պարունակեն մարդկանց իրական կյանքից վերցված օրինակներ,
- ուղերձները պետք է լինեն պարզ և հակիրճ,
- ուղերձները պետք է կազմված լինեն պատշաճ ձևակերպումներով (դրանցում պետք է օգտագործվեն մարդու իրավունքներին, այլ ոչ թե քաղաքական բանավեճին բնորոշ ձևակերպումներ, ինչպես նաև դրանք պետք է զերծ մնան վիրավորական արտահայտություններից),
- ուղերձները պետք է հաղորդվեն արժանահավատ անձի կողմից,
- ուղերձները պետք է պարունակեն գործողության պարզ կոչ,
- ուղերձները պետք է հարմարեցված լինեն թիրախային լսարանին,
- ուղերձները պետք է նախատեսեն հակադարձ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն:

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրվող եզրակացություններն ու հանձնարարականները համապատասխանում են այս հատկանիշներից մի քանիսին: ՔՀՌ-ները ներկայացնում են այդ եզրակացություններն ու հանձնարարականները՝ սահմանելով դրանց առաջնահերթությունը և նպատակ ունենալով օգտագործել դրանք ջատագովման իրենց աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ջատագովման, իրազեկման բարձրացման և մոնիթորինգի աշխատանքներ Թունիսում կայացած ընտրություններում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության առնչությամբ

Թունիսի վերաբերյալ 2011 թվականին ՀԱԻԿ-ի ներկայացված եզրափակիչ դիտորդություններում ընդգրկվեցին որոշ հանձնարարականներ, որոնք անդրադառնում էին երկրում ժողովրդավարական բարեփոխումներին և ուղղված էին նոր Սահմանադրության նախագծման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով իրացնել քվեարկելու և հանրային կյանքում մնացածների հետ հավասար հիմունքներով մասնակցելու իրենց իրավունքը:

Թունիսի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների Թունիսի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խթանման կազմակերպությունը (Organisation tunisienne de dȣfense des droits des personnes handicapȣes - OTDDPH) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մի կազմակերպություն է, որը հիմնադրվել է հեղափոխությունից հետո: Երկրի տարբեր տարածաշրջաններում կազմակերպությունն անցկացրել է իրազեկման բարձրացման մի քանի աշխատաժողովներ՝ նպատակ ունենալով խրախուսել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն առաջիկա ընտրություններին: Կազմակերպության անդամներից մի քանիսն ընտրություններին հանդես եկան որպես պաշտոնական դիտորդներ, ինչը թույլ տվեց կազմակերպությանն ուղղակիորեն հետևել երկրում գտնվող ավելի քան 100 ընտրատեղամասերի աշխատանքին՝ գնահատելով հասանելիության չափանիշների պահպանումը, ինչպես նաև չափագրելով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն նշված ընտրություններին:

Թունիսի նոր Սահմանադրության նախագիծը կազմելու առաքելությամբ օժտված Ազգային սահմանադիր ժողովի ընտրություններից հետո «OTDDPH» կազմակերպությունն անցկացրեց

Սահմանադիր ժողովին հասցեագրված ջատագովման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ներառումը Սահմանադրությունում: Ջատագովման իրենց աշխատանքներում հիմնվելով ՀԱԻԿ-ի և դրա հանձնարարականների վրա՝ «OTDDPH»-ն ելույթներ ունեցավ Ժողովի կոմիտեի նիստերին, համագործակցեց կոմիտեի առանձին անդամների հետ և պատրաստեց մի դրույթի նախագիծ, որը կարող էր ընդգրկվել Սահմանադրությունում:

Գվատեմալայում անկախ դատական համակարգի ջատագովում

Դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողը Գվատեմալա այցելեց այն ժամանակ, երբ երկրում անցկացվում էին Արդարադատության գերագույն դատարանի կազմի ընտրություններ: Դատավորների ընտրություններին հաջորդած Գլխավոր դատախազի ընտրությունների ժամանակ քաղաքացիական հասարակությունը՝ ջատագովման իր գործունեության շրջանակներում, հաճախ մեջբերում էր հատուկ զեկուցողի պատրաստած զեկույցը, մասնավորապես՝ անկախության, թափանցիկության և մասնագիտական բարձր չափանիշների պահպանման պահանջների մասով: Գվատեմալայում ՄԻԳՀԳ-ի գրասենյակը տրամադրեց մի ժողովածու, որում ընդգրկված էին կիրառելի միջազգային չափանիշները, այդ թվում՝ հատուկ զեկուցողի հանձնարարականները: ՔՀՊ-ներն այս ժողովածուն օգտագործեցին դատավորներին նշանակող հանձնաժողովներին հասցեագրված իրենց ջատագովման աշխատանքների ազդեցությունը հզորացնելու համար, որպեսզի գլխավոր դատախազի պաշտոնին առաջադրվեն առավել բարձր որակավորում ունեցող թեկնածուներ: Բացի այդ, ՔՀՊ-ներն օգտագործեցին այս հանձնարարականներն իրենց հանրային հայտարարություններում, որոնցով նրանք պահանջում էին փոփոխություններ մտցնել օրենսդրությունում և ապահովել դատաիրավական համակարգի անկախության հարցում իշխանությունների ավելի մեծ հաշվետվողականությունը:

4.11. Կարողությունների ձևավորում և ամրապնդում

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրված եզրակացություններում ու հանձնարարականներում կարող են մատնանշվել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության դերակատարների կարողություններում հայտնաբերված մի շարք զանազան բացթողումներ, որոնց հետևանքով մարդու իրավունքները իրացման հնարավորությունները սահմանափակվում են: Երբեմն, այդ հանձնարարականներում ոչ միայն մատնանշվում են եղած բացերը, այլև խրախուսվում է կարողությունների ձևավորմանն ուղղված այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք կոչված են լրացնել այդ բացերը: Որոշ դեպքերում ՔՀԴ-ները կարող են նպաստավոր դիրքում հայտնվել նման բացերը լրացնելու կամ պակասեցնելու համար, ընդ որում նրանցից շատերն ունեն ինչպես ՔՀԴ-ների, այնպես էլ պետական մարմինների համար մարդու իրավունքների թեմայով դասընթացներ անցկացնելու փորձ ու գիտելիքներ:

Նշված հանձնարարականներում կարող են արտացոլվել այն բացերը, որոնք արդեն արծարծվել են կարողությունների ձևավորմանն ուղղված ՔՀԴ-ների գործունեության շրջանակներում: Նման դեպքերում հանձնարարականներն ընդգծում են քաղաքացիական հասարակության գործողությունների կարևորությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության դերակատարումը կարողությունների ձևավորման գործում: Այլ դեպքերում հանձնարարականներում կարող են մատնանշվել այն բացթողումները, որոնք անտեսվում են գործող ծրագրերի կողմից: Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության գործընթացում ներգրավված քաղաքացիական հասարակությունը պետք է գնահատի, թե որքանով են իրատեսական կարողությունների ձևավորմանն ուղղված հետագա գործողությունները հետևյալ միջոցներով.

- Գնահատել, թե արդյոք անհրաժեշտ փորձի ու գիտելիքների, առկա ռեսուրսների և ակնկալվող արդյունքների առումով ՔՀԴ-ները գտնվում են նպաստավոր դիրքում կարողությունների

ձևավորման գործողություններ ձեռնարկելու համար: Այն հարցի վերլուծությունը, թե որքանով են կարողությունների ձևավորմանն ուղղված նոր գործողությունները համապատասխանում ՔՀԴ-ների կողմից սահմանած առաջնահերթություններին և աշխատանքային ծրագրերին, նույնպես այդ գնահատման մաս է կազմում:

- Իրականացնել թիրախային հաստատությունների և կազմակերպությունների կարիքների գնահատում, այդ թվում՝ պարզելով վերջիններիս կարողություններում մարդու իրավունքների կենսագործման առումով եղած բացերը լրացնելու պատրաստակամություն:

- Վերլուծել կարողությունների ձևավորման ոլորտում գործող այլ ծրագրերի միջև փոխլրացման հնարավորությունները, նոր միջոցառումների արդյունքում ակնկալվող հավելյալ արժեքը, ինչպես նաև նման միջոցառումների ազդեցությունն ու իրականացման շարունակական բնույթը:

Փորձը ցույց է տվել, որ ինչպես պետական մարմինները, այնպես էլ ՔՀԴ-ները հաճախ պատրաստակամ են մասնակցել կարողությունների ձևավորման ծրագրերին, սակայն դա ինքնաբերաբար չի ապահովում ակնկալվող արդյունքները: Խոչընդոտները կարող են պայմանավորված լինել փոփոխություններ մտցնելու ցածր պատրաստակամությամբ, շահառուների կազմի հաճախակի փոփոխությամբ, կարողությունների ձևավորմանն ուղղված գործողությունների թերի մշակմամբ (օրինակ՝ անկայուն իրավիճակ, անորոշ նպատակներ, շահառուների գիտելիքների մակարդակի մեծ տարբերություններ) կամ նշված գործոնների համադրությամբ: Այս ռիսկերը կարող են հանգամանալից կերպով գնահատվել կարողությունների ձևավորմանն ուղղված ծրագրերի մշակման ընթացքում, իսկ դրանց ազդեցությունը կարող է չափագրվել արդյունքների գնահատման ընթացքում:[13]

[13] Մարդու իրավունքներին թեմայով դասընթացների գնահատման մասին ուղղորդում կարելի գտնել այստեղ՝ «Մարդու իրավունքների թեմայով դասընթացների գնահատում» (ՄԱԿ-ի հրապարակում՝ HR/P/PT/18):

Կոտ դ'Իվուարի անվտանգության ուժերի իրազեկում և կարողությունների ձևավորում սեռական բռնություն դեմ պայքարի շրջանակներում

Կոտ դ'Իվուարի վերաբերյալ 2009 թվականին ներկայացված ՀՊԴ-ից հետո «SOS Exclusion» ՀԿ-ն օգտագործեց դիտարկման մեջ զետեղած հանձնարարականները և մշակեց գործողությունների մի ծրագիր, որի հիմնական շեշտադրումն արված էր մարդու իրավունքների ոլորտում ոստիկանության և զինված ուժերի կարողությունների ձևավորման վրա: «Մենք կազմակերպեցինք երկու աշխատաժողով նվիրված կանանց իրավունքների մասով ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականներին», պարզաբանեց կազմակերպության նախագահը: «Դա մեզ հնարավորություն ընձեռեց որոշ առանցքային դերակատարների, օրինակ՝ Համերաշխության, ընտանիքի, կանանց և երեխաների հարցերով նախարարության, Արդարադատության նախարարության և ՄԱԿ-կանայք կազմակերպության հետ միասին գնահատել նշված հանձնարարականների կենսագործման կարգավիճակը: Դրան հաջորդեց սեռական բռնության դեմ ուղղված սոցիալական մոբիլիզացման արշավը, որը նույնպես արտացոլված էր ՀՊԴ-ի հանձնարարականներից մեկում: «Արշավը մեզ թույլ տվեց միավորել քաղաքացիական հասարակության դերակատարներին, կրոնական առաջնորդներին, ինչպես նաև համերաշխության և արդարադատության նախարարությունները, այդ թվում՝ այն համայնքները, որոնցում անցկացվում էր նշված արշավը»:

4.12. Գենդերային հայեցակետի ներառումը հանձնարարականների կենսագործման հետագա հսկողություն գործընթացում

Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված քայլերի **առաջնահերթությունները սահմանելիս** կարելի է օգտվել հետևյալ հարցադրումներից.

- Արդյո՞ք առաջնահերթ հանձնարարականները և դրանց կենսագործման հետագա հսկողության հետ կապված միջոցառումներն

անդրադառնում են առավելապես կանանց, թե տղամարդկանց վրա:

- Ինչպե՞ս է ընդգրկված գենդերային հայեցակետն առաջնահերթ համարվող միջամտության շրջանակներում: Արդյո՞ք դա արվում է գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող գործողությունների միջոցով, թե իրականացվում է բոլոր բնագավառներում գենդերային օրակարգի ներառմամբ:
- Արդյո՞ք համապատասխան իրավունքներով օժտված որոշ անձինք ենթարկվում են բազմակի խտրականության:
- Արյդո՞ք հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված միջոցառումներն անդրադառնում են նման իրավատերերի դրությանը:
- Արդյո՞ք նախատեսված միջոցառումները կոչված են իրավազորել համապատասխան իրավունքներով օժտված անձանց և պայքարել գենդերային պատկանելությամբ պայմանավորված խտրականության և անհավասարության դեմ:
- Արդյո՞ք տարբեր իրավատերերի հետ անցկացվել են խորհրդակցություններ՝ միջամտությունների առաջնահերթությունը սահմանելու նպատակով:

Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված **միջոցառումներ իրականացնելիս** հարկավոր է.

- հավաքել և ներկայացնել ըստ սեռի և բազմազանության այլ տարրերի, օրինակ՝ ըստ տարիքի, էթնիկական ծագման, հաշմանդամության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և այլ հատկանիշի բաշխված տվյալներ,
- բացահայտորեն ընդունել զեկույցում տեղ գտած բացթողումներն այն դեպքերում, երբ բացակայում են ըստ գենդերային պատկանելության բաշխված տվյալներ,
- միջոցառումներ, դասընթացներ և կարողությունների ձևավորմանն ուղղված գործողություններ կազմակերպելիս ապա-

հովել գենդերային հավասարակշռություն ինչպես մասնակիցների, այնպես էլ դասավանդողների կամ մասնագետների համար, ինչպես նաև ապահովել գենդերային առանձնահատկություններ հաշվի առնող միջավայր (անցկացման վայր և ժամկետներ), բովանդակություն և մեթոդաբանություն,

- իրականացնել պարբերական գենդերային վերլուծություններ,

  աշխատել գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող գործընկերների հետ,

- ջատագովման և իրազեկման բարձրացման միջոցառումներում ներառել այնպիսի ուղերձներ, որոնք նվիրված են գենդերային հավասարության խնդրին, ինչպես նաև գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող ձևակերպումներ և պատկերներ:

4.13. Ներառման, բազմազանության և հասանելիության արտացոլում

Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված գործողությունների պլանավորման և իրականացման ընթացքում հարկավոր է.

- դրսևորել ներառական մոտեցում՝ ընդգրկելով շահառուների ողջ բազմազանությունը,

- ապահովել, որ հանձնարարականների կատարման հետագա հսկողության գործողություններում լսելի լինի և արտացոլվի տարբեր կարծիքների ողջ բազմազանությունը,

- ուսումնասիրել, թե որքանով են այդ միջոցառումները հասանելի տարբեր խմբերի, այդ թվում՝ փոքրամասնություններին պատկանող և հաշմանդամություն ունեցող անձանց համար և միջոցներ ձեռնարկել համապատասխան փաստաթղթերն ու ռեսուրսները հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի դարձնելու համար:

4.14. Հանձնարարականների օգտագործումը դատավարություններում և դատավեճերում

Բազմաթիվ ՔՀԴ-ներ աջակցություն են մատուցում սեփական իրավունքները դատական և կիսադատական մեխանիզմների շրջանակներում պաշտպանող անհատներին և խմբերին՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով: Նման աջակցությունը կարող է ընդգրկել՝ դիմումատուներին ցուցաբերվող օգնություն, փորձագիտական իրավաբանական եզրակացությունների ներկայացում, ինչպես նաև դատավորներին, դատախազներին, իրավաբաններին և փաստաբաններին հասցեագրված կարողությունների ձևավորման միջոցառումներ, որոնք կոչված են ապահավել վերջիններիս կողմից մարդու իրավունքների վրա հիմնված նորմերի կիրարկումը՝ խրախուսելով ակտիվիստներին ու դատարաններին օգտագործել միջազգային իրավական նորմերը:

Ազգային և տարածաշրջանային մակարդակով իրականացվող դատական գործընթացներում մարդու իրավունքների վրա հիմնված միջազգային նորմերի կիրառումն ու խրախուսումը կարող է ամրապնդել մարդու իրավունքների դատաիրավական բազան: Օրինակ, համաձայնագրային մարմինների ընդհանուր մեկնաբանություններում զետեղված համաձայնագրային դրույթների պարզաբանումը կարող է լույս սփռել այն հարցի վրա, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ իրավունքը, ինչպես նաև կարող է հաշվի առնվել ազգային դատարանների կողմից առանձին գործերով որոշում կայացնելիս: Նմանապես, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից տրված կոնկրետ հանձնարարականների մեջբերումը կարող է ամրապնդել իրավատերերի պահանջները:

Քենիայում պահանջում են ապահովել համարժեք փոխարինող դեղորայքի մատչելիությունը

2012 թվականի ապրիլի 20-ին Քենիայի Գերագույն դատարանը պատմական վճիռ կայացրեց առ այն, որ «Կեղծ ապրանքատեսակների դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքի որոշ դրույթներ չեն տարածվում որևէ ապրանքանիշի ներքո արտադրվող դեղամիջոցներին համարժեք փոխարինող դեղորայքի վրա՝ դրանով

իսկ պաշտպանելով մատչելի բուժման հասանելիությունը: Այս գործը քննության առնվեց ՄԻԱՎ վարակակիր հանդիսացող երեք անձի դիմումով: Արևելյան Աֆրիկայում ՄԻԱՎ վարակակիրների մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում գործող իրավապաշտպան «KELIN» կազմակերպությունը հետազոտական աջակցություն մատուցեց դիմումատուների շահերը պաշտպանող գլխավոր փաստաբանին: 2009 թվականից ի վեր վարույթում գտնվող այս գործի շրջանակներում վիճարկվում էին «Կեղծ ապրանքատեսակների դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքի որոշ հայեցակետեր, որոնք սպառնում էին արգելել որևէ ապրանքանիշի ներքո արտադրվող դեղամիջոցներին համարժեք ընդհանրական բնույթի փոխարինող մատչելի դեղորայքի, այդ թվում՝ ՄԻԱՎ վարակակիրների համար նախատեսված հակառետրովիրուսային դեղամիջոցների ներկրումը: Առողջության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը ներկայացրեց իր եզրակացություն-դիրքորոշումը, որը մի քանի անգամ մեջբերվեց կայացրած վճռում: Իր կայացրած վճռում դատավոր տկն Մգուգին հայտարարեց, որ մտավոր սեփականությունը չպետք է ավելի բարձր դասվի, քան կյանքի, առողջության և մարդկային արժանապատվության իրավունքները, որոնք ամրագրված են Քենիայի Սահմանադրությունում: Ուստի, համապատասխան արտոնագրերի պահառուները չեն կարողանա օգտագործել տվյալ օրենքը ընդհանրական բնույթի փոխարինող դեղորայքի ներկրումն օրենքով սահմանված կարգով արգելելու համար, ինչպես վախենում էին այս գործով հանդես եկող դիմումատուները:[14]

4.15. Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված միջոցառումների և լավ գործելակերպի արդյունքների տարածում

Մարդու իրավունքների վրա հիմնված միջազգային իրավական նորմերը և դրանց հետ կապված մեխանիզմները կարող են ընկալվել

[14] Տե՛ս վճիռ՝ http://bit.ly/L1cEu5 (կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2013 թվականի հուլիսի 24-ի դրությամբ):

որպես իրականությունից կտրված իրողություններ: Ինչպե՞ս կարող են Ժնևում գտնվող անկախ փորձագետների կողմից տրված հանձնարարականներն ազդել սովորական մարդկանց կյանքի վրա: Ինչպե՞ս կարող են դրանք դրականորեն ազդել պատասխանատու մարմինների և անձանց վարքագծի վրա, եթե վերջիններս կարող են նույնիսկ տեղյակ չլինել, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ համաձայնագրային մարմինը, կամ թե ինչով է զբաղվում հատուկ զեկուցողը: Սակայն փոփոխությունները հնարավոր են և իրականում տեղի են ունենում՝ շատ դեպքերում քաղաքացիական հասարակության կողմից հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանն ուղղված աշխատանքի շնորհիվ:

Նման միջոցառումների և դրանց առնչվող լավագույն գործելակերպի արդյունքների փաստագրումը, հաղորդումը և տարածումը կարող են ոգեշնչման աղբյուր ծառայել այլոց համար՝ ներգրավելով նրանց այդ աշխատանքում, դրդելով նրանց վերարտադրել և համապատասխանեցնել այդ փորձը սեփական համատեքստին և առաջնահերթություններին: Բացի այդ, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ազդեցության վերաբերյալ հետադարձ կապը բարձր է գնահատվում է նման մեխանիզմների շրջանակներում գործող փորձագետների կողմից:

Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում բժշկական խնամքի ներքո գտնվող հիվանդների մարդու իրավունքներին առնչվող դատական գործերի նյութերի և ընթացակարգերի տարածում

«Բժշկական խնամքի ներքո գտնվող հիվանդների մարդու իրավունքներ» ծրագիրը մշակում է առանձին երկրների համար մասնագիտական ձեռնարկներ, որոնք նախատեսված են այն իրավաբանների համար, ովքեր հետաքրքրվում են հիվանդի շահերի ներկայացմամբ մարդու իրավունքներին առնչվող դատավարությունների շրջանակներում: Այս ձեռնարկները կրում են գործնական բնույթ և անդրադառնում են ինչպես

դատավարական, այնպես էլ այլընտրանքային մեխանիզմներին, ինչպիսիք են՝ մարդու իրավունքների պաշտպանները և բժշկական արտոնագրման մարմինները, ինչպես նաև ուսումնասիրում են հիվանդների և բուժծառայություններ մատուցողների իրավունքներն ու պարտականություններն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով, այդ թվում՝ ընդգրկում են տվյալ համաձայնագրային մարմնի նախադեպային բազայի և հատուկ ընթացակարգերի աշխատանքի մանրամասն ուսումնասիրություն:

Ծրագիրը նախատեսում է նաև մասնագիտական համայնք, որը գործում է համացանցում՝ հնարավորություն տալով կիսվել համապատասխան նյութերով և ռեսուրսներով: Գործնական աշխատանքի վրա հիմնված համայնքն ունի երեք բաժին՝ իրավագիտության և առողջապահության դասավանդում, բժշկական խնամքի ներքո գտնվող անձանց մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներ և լրատվամիջոցների հետ աշխատանքի գործիքներ:[15]

4.16. Ներգրավումը հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության առկա ընթացակարգերում և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների աշխատանքներում

Հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգերը, որոնք առաջնորդվում են մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից, հիմնված են կառավարությունների միջև համագործակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության վրա: Սույն ուղեցույցի հետևյալ բաժնում նկարագրվում են հանձնարարականների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգերը և ընդունված գործելակերպը:

15 http://health-rights.org/

5. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից ընդունված հետագա հսկողության ընթացակարգեր և գործելակերպ

Մարդու իրավունքների գծով հանձնարարականներին հաջորդած փոփոխությունների գնահատումը, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ընթացակարգերի ներքո տվյալ պետության ուսումնասիրությունից հետո տեղ գտած իրողությունների պարզաբանումը, ինչպես նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կառույցների տեղային ազդեցության ընկալումը հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետաքրքրության առանցքային առարկան ու նպատակը: Բոլոր մեխանիզմներն իրենց ստեղծման պահից գիտակցում են, որ իրենց նշանակությունը պայմանավորված է այն դրական փոփոխություններով, որոնք նրանք կարող են առաջացնել կամ սերմանել: Այսպիսով, դրական փոփոխությունների մասին վկայող ապացույցները նման մեխանիզմների արդյունավետության նշանն են: Այդպիսի «ապացույցների որոնումը» բերել է հետագա հսկողության տարբեր ձևերի մշակմանը յուրաքանչյուր մեխանիզմի կողմից: Դրանցից մի քանիսը պաշտոնապես ընդունվել են որպես ընթացակարգեր, ինչպես օրինակ՝ որոշ համաձայնագրային մարմինների եզրափակիչ դիտողությունների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգերը: Այլ ընթացակարգեր ստացել են պարբերական բնույթ, օրինակ՝ հետագա հսկողության զեկույցները, որոնք պատրաստվում են որոշ հատուկ զեկուցողների կողմից համապատասխան երկրներ կատարված այցելություններից հետո: Այլ դեպքերում հետագա հսկողությունը կարող է սահմանվել արտահերթ նախաձեռնության շրջանակներում, օրինակ, երբ տարածաշրջանային աշխատաժողովին ներկայացվում է մարդու իրավունքների գծով հանձնարարականների կենսագործման փորձը: Հաջորդիվ ներկայացված բաժիններում բերվում է այս միջոցների ավելի մանրամասն նկարագիրը:

5.1. Մարդու իրավունքների հարցերով զբաղվող համաձայնագրային մարմիններ

Եզրափակիչ դիտողությունների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգեր

Համաձայնագրային մարմինները սահմանել են այնպիսի ընթացակարգեր, որոնք կոչված են աջակցել մասնակից պետություններին իրենց գործողություններում առաջնորդվել եզրափակիչ դիտողություններում զետեղված հանձնարարականներով կամ էլ անհատական բողոքների ընթացակարգերի ներքո քննության առնված գործերի առնչությամբ կայացրած որոշումներով: Բոլոր համաձայնագրային մարմինները պետություններից պահանջում են արտացոլել հանձնարարականների և որոշումների կատարման հետագա ընթացքը համապատասխան պարբերական զեկույցներում: Խոշտանգումների դեմ կոմիտեն (ԽԴԿ), Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեն (ՌԽՎԿ), Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻ կոմիտե), Կանանց դեմ խտրականության վերացման հարցերով կոմիտեն (ԿԴԽՎԿ), ինչպես նաև Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտեն (ԲԱԿ) սահմանել են իրենց կողմից ներկայացված հանձնարարականների և կայացրած որոշումների կենսագործման հետագա հսկողության պաշտոնական ընթացակարգեր: Այս հինգ համաձայնագրային մարմիններն իրենց եզրափակիչ դիտողություններում պետություններից պահանջում են մեկ տարվա ընթացքում (իսկ ԿԴԽՎԿ-ի պարագայում՝ երկու տարվա ընթացքում) զեկույց ներկայացնել այն միջոցառումների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են ի պատասխան առանձին հանձնարարականների կամ «հրատապ առաջնահերթ մտահոգությունների», և որոնք հնարավոր է եղել կենսագործել անհապաղ: Այս կոմիտեների կողմից նշանակվում է մի զեկուցող կամ համակարգող, ով զբաղվում է հանձնարարականների կամ որոշումների կատարման հետագա հսկողության հարցերով և պատասխանատու է դրանց վերաբերյալ մասնակից պետությունների կողմից ներկայացված զեկույցների գնահատման և կոմիտեին դրանց ներկայացման համար: Համաձայնագրային մարմինների որոշ անդամներ, այցելություններ

են կատարել մասնակից պետություններ վերջիններիս հրավերով՝ նպատակ ունենալով հետևել զեկույցում և եզրափակիչ դիտողություններում զետեղված դրույթների կենսագործման ընթացքին:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների կոմիտեին, ապա հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության վերաբերյալ զեկույցը մասնակից պետությունից ստանալուց անմիջապես հետո հետագա հսկողության հարցերով հատուկ զեկուցողը յուրաքանչյուր նիստին պատրաստում է զեկույց արձանագրած առաջընթացի մասին, որում ընդգրկվում են հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության վերաբերյալ մասնակից պետության կողմից ներկայացված զեկույցի ամփոփագիրը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները, ինչպես նաև հանձնարարականների կամ որոշումների կատարման հետագա հսկողության գնահատման չափորոշիչների վրա հիմնված կոմիտեի գնահատականը (տե՛ս ստորև բերված աղյուսակը): Դրանից հետո կոմիտեն տեղեկացնում է մասնակից պետությանը վերջինիս կողմից հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության վերաբերյալ ներկայացված զեկույցի առնչությամբ կայացրած որոշման մասին: Եթե մասնակից պետությունը չի համագործակցում հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգի շրջանակներում կամ ձեռնարկում է այնպիսի միջոցառումներ, որոնք կոմիտեն համարում է անբավարար, ապա զեկուցողը կարող է հանդիպում պահանջել մասնակից պետության ներկայացուցչի հետ:

Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված չափորոշիչներ հանձնարարականների կենսագործման հետագա գնահատման համար

Բավարար պատասխան/միջոցառումներ

Ա պատասխանը հիմնականում բավարար է

Մասամբ բավարար պատասխան/միջոցառումներ

Բ1 Ձեռնարկվել են կոնկրետ միջոցառումներ, սակայն պահանջվում են լրացուցիչ տեղեկություններ

Բ2 Ձեռնարկվել են նախնական միջոցառումներ, սակայն պահանջվում են լրացուցիչ տեղեկություններ

Անբավարար պատասխան/միջոցառումներ

Գ1 Ստացվել է պատասխան, սակայն ձեռնարկված միջոցառումներով տվյալ հանձնարարականը չի կենսագործվում

Գ2 Ստացվել է պատասխան, բայց այն չի համապատասխանում տրված հանձնարարականին

Բացակայում է համագործակցությունը կոմիտեի հետ

Դ1 Պատասխան չի ստացվել սահմանված ժամկետում կամ պատասխան չի տրվել զեկույցում հնչեցրած հստակ հարցին

Դ2 Պատասխան չի ստացվել հիշեցում(ներ)ից հետո

Ձեռնարկված միջոցառումները հակասում են կոմիտեի հանձնարարականներին

Ե2 Պատասխանը վկայում է այն մասին, որ ձեռնարկված միջոցառումները հակասում են կոմիտեի տրված հանձնարարականներին

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

Մասնակից պետության կողմից ներկայացված զեկույցների և խնդիրների ցանկի քննության շրջանակներում ներկայացվող «զուգահեռ» կամ «այլընտրանքային» զեկույցների օրինակով՝ ՔՀԴ-ները նույնպես կարող են տեղեկատվություն ներկայացնել հանձնարարականների կենսագործման հսկողության ընթացակարգի շրջանակներում: Նման պարագայում ներկայացված նյութերում պետք է շեշտադրվեն հատկապես այն հանձնարարականները, որոնք սահմանվել են հետա-

գա հսկողության ընթացակարգի շրջանակներում տրված եզրափակիչ դիտողություններում, այդ նյութերում պետք է հակիրճ տեղեկություններ[16] ներկայացվեն հիշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև դրանցում պետք է գնահատվի վերջիններիս արդյունավետությունը: Հանձնարարականների կենսագործման համար անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկելու ցանկացած փաստ նույնպես կարող է հիշատակվել: Հնարավոր է, որ ՔՀԴ-ները ցանկանան մեկնաբանել տվյալ պետության կողմից տրված պատասխանները: Հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության ընթացակարգի շրջանակներում նյութեր ներկայացնելիս ՔՀԴ-ները պետք է հետևեն նույն կանոններին, ինչ մասնակից պետությունը զեկույցներ և խնդիրների ցանկ ներկայացնելիս, ընդ որում այդ նյութերը բաց են հանրության համար, դրանք կարելի է գտնել ՄԻԳՀԳ-ի կայքէջում, կամ էլ նման նյութերը պահվում են գաղտնի, եթե այդպես է պահանջել դրանք ներկայացրած կազմակերպությունը:

ԵԻԿ-ի եզրափակիչ դիտողությունների կիրառումն ազգային մակարդակով

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի զեկույցների ներկայացման գործընթացում ներգրավման ցիկլային մոտեցումը խթանելու, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ջատագովման աշխատանքներում ԵԻԿ-ի կողմից տրված հանձնարարականների լիարժեք կիրառումը խրախուսելու նպատակով «Child Rights Connect» կազմակերպությունը կազմել է մի շարք դեպքերի ուսումնասիրություններ, որոնք նվիրված են եղել ՔՀԴ-ների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից իրականացվող հետագա հսկողության միջոցառումներին:[17]

Համաձայնագրային մարմինների անդամները նույնպես կարող են մասնակցել տարածաշրջանային, ենթատարածաշրջանային կամ

[16] ԿԴԽՎԿ-ն պահանջում է, որ ներկայացված նյութերը չգերազանցեն 3.500 բառ առավելագույն սահմանաչափը:

[17] www.childrightsnet.org/NGOGroup/CRC/FollowUp/

ազգային աշխատաժողովներին, որոնք նվիրված են հանձնարարականների կենսագործման թեմային և կազմակերպվում են քաղաքացիական հասարակության, ՄԱԿ-ի գործակալությունների և ՄԻԳՀԳ-ի, կամ էլ համապատասխան կառավարությունների կողմից: Քաղաքացիական հասարակության մասնակցությունն այս աշխատաժողովներին խրախուսվում է:

Խոշտանգումների կանխարգելման հարցերով ենթակոմիտեի հետագա հսկողության այցելություններ

2007 թվականին Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության դրույթների ներքո ստեղծված Խոշտանգումների հարցերով զբաղվող ենթակոմիտեն իրականացնում է փաստահավաք այցելություններ ցանկացած կալանավայրեր և ազատազրկման վայրեր, որոնք տեղակայված են մասնակից պետությունների տարածքներում, այդ թվում՝ ոստիկանության բաժանմունքներ, բանտեր, հոգեկան առողջության և սոցիալական խնամքի հաստատություններ: Երկիր կատարած այցելության ավարտին ենթակոմիտեն իր հանձնարարականներն ու դիտողությունները հաղորդում է տվյալ պետությանը՝ գաղտնի զեկույցի տեսքով:

Կանոնավոր կարգով կատարված այցելությունից հետո ԽՌԵ-ն կարող է իր հայեցողությամբ անհրաժեշտ համարել և առաջարկել ևս մեկ կարճ այցելություն՝ արդյունքների հետագա հսկողությունն ապահովելու նպատակով: 2010 թվականի սեպտեմբերին ԽՌԵ-ն Պարագվայ կատարեց արդյունքների հետագա հսկողության իր առաջին այցելությունը, որի շրջանակներում ներգրավվեց նաև քաղաքացիական հասարակությունը:

Անհատական բողոքներով կայացրած որոշումների կենսագործման հետագա հսկողություն

Որոշ դեպքերում մարդու իրավունքների համաձայնագրային մարմինները կարող են քննության առնել անհատական բողոքներ կամ դիմումներ:[18] Նման ընթացակարգի շրջանակներում ցանկա-

[18] 2013 թվականի հուլիսի դրությամբ այս ընթացակարգը գործում էր Քաղաքացիական

ցած անհատ, ով պնդում է տվյալ համաձայնագրի ներքո նախատեսված իր իրավունքների խախտման մասին, իրավասու է բողոք ներկայացնել համաձայնագրային մարմնին ընդդեմ այն պետության, որն անդամակցում է տվյալ փաստաթղթին և ճանաչել է տվյալ համաձայնագրային մարմնի՝ անհատներից ստացված բողոքները քննության առնելու լիազորությունը: Բողոքը, նախ և առաջ, գնահատվում է ընդունելության պահանջները բավարարելու տեսանկյունից: Եթե բողոքը ընդունելի է համարվում, ապա այն քննության է առնվում ըստ գործի հանգամանքների, և տվյալ համաձայնագրային մարմինը որոշում է կայացնում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք տեղի է ունեցել տվյալ համաձայնագրի դրույթի խախտում, թե ոչ: Եթե տվյալ համաձայնագրային մարմինը որոշում է, որ դիմումատու(ներ)ի նկատմամբ թույլ է տրվել խախտում, ապա այդ մարմինը համապատասխան պետությունից պահանջում է տեղեկություններ տրամադրել (սովորաբար վեց ամսվա ընթացքում) այն քայլերի վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են համաձայնագրային մարմնի որոշումը կատարելու ուղղությամբ: Պետության պատասխանն այնուհետև փոխանցվում է դիմումատու(ներ)ին, ով(քեր) կարող է (են) իրենց դիտողությունները հայտնել տվյալ պետության ներկայացված նյութերի առնչությամբ:

Որոշ համաձայնագրային մարմիններ, մասնավորապես՝ Մարդու իրավունքների կոմիտեն, ԽԴԿ-ն, ՌԽՎԿ-ն և ԿԴԽՎԿ-ն, սահմանել են համապատասխան ընթացակարգեր, որոնք կոչված են մշտա-

---

և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի, Խոշտանգումների դեմ կոնվենցիայի, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի պարագայում: Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիայի և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մասով այդ ընթացակարգն ուժի մեջ կմտնի այն ժամանակ, երբ 10 մասնակից պետություններ հանդես կգան վերոհիշյալ փաստաթղթերից առաջինի 77-րդ հոդվածի ներքո նախատեսված անհրաժեշտ հայտարարությամբ, ինչպես նաև կվավերացնեն վերոհիշյալ փաստաթղթերից երկրորդի կամընտիր արձանագրությունը:

դիտարկել նշված կոմիտեների կողմից կայացված որոշումների կենսագործումը: Նման ընթացակարգերի ներքո նշանակվում է զեկուցող, ում վրա դրվում է կայացրած որոշումների կատարման հսկողության առաքելությունը: Զեկուցողները նշանակվում են որոշակի ժամկետով, իսկ ԿԴԽՎԿ-ի պարագայում՝ առանձին գործերի հետագա ընթացքին հետևելու նկատառումով: Երբ կայացրած որոշումների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին պետության պատասխանները համարվում են անբավարար կամ ճշմարտությանը չհամապատասխանող, զեկուցողը կարող է խորհրդակցություններ անցկացնել տվյալ մասնակից պետության դիվանագիտական ներկայացուցիչների հետ, ընդ որում նման դեպքերում սովորաբար խոսքը գնում է Ժնևում կամ Նյու Յորքում տեղեկացված մշտական դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների մասին:

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

Այն դեպքերում, երբ ՔՀԴ-ները ներգրավված են անհատական բողոքների ներկայացման գործընթացում (օրինակ՝ երբ ՔՀԴ-ներն աջակցում են դիմումատուին բողոքի ներկայացման հարցում), նրանք կարող են նաև տեղեկատվություն տրամադրել այն հարցի վերաբերյալ, թե ինչպես է կատարվում տվյալ գործով կայացրած որոշումը:

Մարդու իրավունքների վերաբերյալ կայացրած որոշումների կատարման գնահատում

2010 թվականին «Բաց հասարակության արդարադատության նախաձեռնություն» կազմակերպությունը հրապարակեց մի զեկույց «Դատապարտումից դեպի արդարադատություն՝ միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների որոշումների կենսագործում» խորագրով, որի շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների հարցերով զբաղվող մարմինների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի համաձայնագրային մարմինների, աֆրիկյան, եվրոպական և միջաֆրիկյան համակարգերի կողմից կայացրած

որոշումների կենսագործման ճանապարհին ծառացած մարտահրավերները: Նշված զեկույցում ուսումնասիրվում է այն հարցը, որ չնայած վերջին 25 տարվա ընթացքում արձանագրված նվաճումների՝ բոլոր այս համակարգերը բախվում են խոչընդոտների իրենց վճիռներն իրական փոփոխությունների վերածելու գործում: Շատ դեպքերում բեկումնային նշանակություն ունեցող որոշումները չեն հանգեցրել որևէ նշանակալի բարեփոխումների: Համաձայնագրային մարմինների որոշումների կենսագործման վերլուծության շրջանակներում զեկույցը եկավ այն եզրակացության, որ, ընդհանուր առմամբ, կենսագործման հաջողված փորձ է արձանագրվել այն դեպքերում, երբ ապահովվել է քաղաքական բարձր տեսանելիություն, իսկ համապատասխան գործերի քննության առարկա դարձել են այն պետությունները, որոնք ունեցել են իրավունքի գերակայության զարգացած ավանդույթ: Այն դեպքերում, երբ արձանագրվել են կայացրած որոշումների կենսագործման փաստեր, դրանք հաճախ պայմանավորած են եղել այնպիսի հզոր քաղաքացիական հասարակության ներկայությամբ, որն ընդունակ է եղել լրացնել հետագա հսկողության ուղղությամբ կոմիտեի կողմից ձեռնարկված ջանքերը, ինչպես նաև կարողացել է ներպետական ասպարեզում գործադրել ճնշման այլ լծակներ:

5.2. Մարդու իրավունքների խորհուրդ

Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքի հետ կապված հետագա հսկողություն

Գլխավոր ասամբլեայի թիվ 60/251 բանաձևը, որի համաձայն ստեղծվել է Մարդու իրավունքների խորհուրդը (Խորհուրդ), որոշեց, որ Խորհրդի աշխատանքային մեթոդները պետք է **նախատեսեն հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանը նվիրված քննարկումներ:**

Խորհուրդը հետևում է մարդու իրավունքներին առնչվող հարցերին և քննարկում է դրանք՝

- Ընդունած բանաձևերում և որոշումներում ուղղակի հղումներ ներառելով հանձնարարականների կատարման հետագա հսկողության հարցերին: Բանաձևերում սովորաբար զետեղված են դրույթներ, որոնցում ասվում է, որ Խորհուրդը «շարունակում է ակտիվորեն զբաղվել տվյալ հարցով»: Դա նշանակում է, որ առաջիկա նիստին այս թեման կպահպանվի Խորհրդի քննարկման օրակարգում:

- Անցկացնելով իր հանդիպումները սովորական և հատուկ նիստերին և հիմնվելով օրակարգի այն կետերի հիման վրա, որոնք կրկնվում են ժամանակի ընթացքում: Ասվածը միանշանակ վերաբերվում է պարբերական նիստերին, թեև կարող է պատահել այնպես, որ հատուկ նիստեր գումարվեն նույն կամ նմանատիպ թեմայի շուրջ (օրինակ՝ հատուկ նիստեր նվիրված Սիրիայի Արաբական Հանրապետությունում 2011 և 2012 թվականներին մարդու իրավունքների շուրջ ստեղծված իրավիճակին):

- Հանձնարարելով իր մեխանիզմներին, այդ թվում՝ հատուկ ընթացակարգերին, օժանդակ մեխանիզմներին կամ ՄԻԳՀԳ-ին ձեռնարկել որոշակի քայլեր և Խորհրդի առաջիկա նիստին ներկայացնել համապատասխան զեկույց: Հնարավոր է նաև, որ Խորհուրդը որոշի ստեղծել արտահերթ մեխանիզմ, օրինակ, հետաքննող հանձնաժողով կամ փաստահավաք առաքելություն, որն օժտված կլինի մարդու իրավունքների խախտումները հետաքննելու և Խորհրդի ուսումնասիրության համար իր եզրակացությունները զեկույցի տեսքով ներկայացնելու մանդատով: Սովորաբար Խորհրդի վրա դրված այլ գործառույթներից են ուսումնասիրությունների իրականացումը, փորձագետների հանդիպումների կամ հանձնաժողովների կազմակերպումը:

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

Հանձնարարականների կամ որոշումների կենսագործման հետագա հսկողության վերոհիշյալ միջոցները Խորհրդի ընդունված աշխատանքային մեթոդներից են: Ուստի, քաղաքացիական հասարակության մասնակցության համար գործում են նույնանման պայմաններ, որոնցից են ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի խորհրդի աշխատանքում խորհրդատվական կարգավիճակով հասարակական կազմակերպությունների ներգրավման, գրավոր և բանավոր հայտարարությունների ներկայացման, ինչպես նաև ուղեկից միջոցառումների կազմակերպման հնարավորությունները: Այն հասարակական կազմակերպությունները, որոնք չեն ուղևորվում Ժնև Մարդու իրավունքների խորհրդի նիստին մասնակցելու համար, կարող են օրակարգի որոշ կետերի վերաբերյալ բանավոր հայտարարություններ ներկայացնել տեսագրված ուղերձի միջոցով: Լրացուցիչ ուղղորդում կարելի է գտնել ՄԻԳՀԳ-ի պատրաստած «Ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար՝ աշխատանք Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցերով զբաղվող ծրագրի և ՄԻԳՀԳ-ի հետ» գործնական ձեռնարկում, որը բերված է Մարդու իրավունքների խորհրդի[19] և ՄԻԳՀԳ կայքէջերում:[20]

Գրավոր ու բանավոր հայտարարություններից և ուղեկից միջոցառումներից բացի՝ ընդունված է քաղաքացիական հասարակությանն առաջարկել իր ներդրումն ունենալ ուսումնասիրությունների իրականացման գործում և մասնակցել Խորհրդի մանդատի ներքո անցկացվող փորձագիտական հանդիպումներին և հանձնաժողովներին: Ավելին, հասարակական կազմակերպությունները կարող են մասնակցել բաց ձևաչափով ոչ պաշտոնական հանդիպումներին, որոնք անցկացվում են Խորհրդի նիստերին զուգահեռ, և որոնց շրջանակներում քննարկվում է բանաձևերի նախագծերի տեքստը:

Եվ վերջապես, Խորհրդի ընդունած բանաձևերում և որոշումներում արտացոլվում են պետությունների կողմից մարդու իրավունքները

[19] Կարելի է գտնել այստեղ՝ www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

[20] www.ohchr.org/EN/HRBodies/HRC/Pages/NgoParticipation.aspx

խթանելու և պաշտպանելու գծով ստանձնած պարտավորությունները: Այստեղ ևս քաղաքացիական հասարակությունը կարող է քարտեզագրել իր գործողությունները, սահմանել իր առաջնահերթությունները և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել մարդու իրավունքների գծով ստանձնած պարտավորությունների կատարումը խթանելու համար, ինչն արտացոլված է Խորհրդի այն բանաձևերում և որոշումներում, որոնք հետաքրքրություն են ներկայացնում քաղաքացիական հասարակության համար:

Օժանդակ մարմիններ, մեխանիզմներ և մանդատներ

Հանձնարարականների մի մեծ թիվ տրվում է Խորհրդի օժանդակ մարմինների և մեխանիզմների կողմից: Դրանցից են.

- Համընդհանուր պարբերական դիտարկումը (տե՛ս սույն ուղեցույցի 5.4. կետը)
- Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտեն,
- Բողոքների ներկայացման ընթացակարգը,
- Հատուկ ընթացակարգերը (տե՛ս սույն ուղեցույցի 5.3. կետը),
- Սոցիալական ֆորումը,
- Փոքրամասնությունների հարցերով ֆորումը,
- Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների հարցերով փորձագիտական մեխանիզմը
- Ձեռներեցության և մարդու իրավունքների հարցերով ֆորումը:

Այս մարմիններում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ ուղղորդում կարելի է գտնել ՄԻԳՀԳ-ի պատրաստած «Ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար՝ աշխատանք ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով զբաղվող ծրագրի հետ» ձեռնարկում, քաղաքացիական հասարակության համար նախատեսված գործնական ձեռնարկում, ինչպես նաև սոցիալական ֆորումի հարցերին նվիրված գործնական ձեռնարկում:[21]

[21] Կարելի է գտնել այստեղ՝ www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

5.3. Հատուկ ընթացակարգեր

Երկիր կատարած այցելություններին հաջորդող միջոցառումներ

Հատուկ ընթացակարգերի շրջանակներում մանդատակիր մարմինների այցելության համար պահանջվում է տվյալ երկիր այցելելու հրավերը: Հատուկ ընթացակարգերն արձագանքում են այցելության նման հրավերներին՝

- հրապարակելով հրավերներն իրենց զեկույցներում, կայքէջերում, հանրային միջոցառումների շրջանակներում, ինչպես նաև լրատվամիջոցներում,
- անցկացնելով հանդիպումներ համապատասխան երկրների դիվանագիտական ներկայացուցիչների հետ,
- կատարելով տվյալ երկիր կամ տարածաշրջան աշխատանքային այցելություններ, որոնք կարող են ճանապարհ հարթել պաշտոնական հրավերի համար (օրինակ՝ ճանաչողական այցելությունների միջոցով), ինչպես նաև
- ուղարկելով և հրապարակելով պաշտոնական հիշեցումներ նախկինում իրենց կողմից հնչեցրած խնդրանքների վերաբերյալ:

Այցելության ավարտից անմիջապես հետո հատուկ ընթացակարգերի շրջանակներում մշակվում են այցելության արդյունքներին հետևելու մի շարք տարբեր միջոցառումներ: Նման միջոցառումներից են.

1. Կրկնակի հսկիչ այցելություններ: Մի քանի մանդատների ներքո իրականացվում են նոր այցելություններ, որոնք կոչված են հետևել տվյալ երկիր նախկինում այցելած առաքելությունների արդյունքներին: Նման կրկնակի այցելությունները հնարավորություն են տալիս հանգամանալից կերպով գնահատել արձանագրած առաջընթացն ու ծառացած խոչընդոտները, որոնք չափագրվում են նախորդ այցելության շրջանակներում տրված եզրակացությունների և հանձնարարականների համեմատ: Նախորդ այցելությունների արդյունքներին հետևելու նպատակով իրականացվող կրկնակի այցելությունները համարվում են լավ գործելակերպի դրսևորումներ,

սակայն յուրաքանչյուր տարի հատուկ ընթացակարգերի շրջանակներում կատարվող 40-ից 50 այցելություններից միայն մի քանիսն են կրկնակի այցելություններ, ինչը պայմանավորված է միջոցների սակավությամբ:

Կրկնակի հսկիչ այցելությունների օրինակներ

Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնկագրության հարցերով հատուկ զեկուցող

➞ 2012 թվական՝ Գվատեմալա (A/HRC/22/54/Add.1)

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցող

➞ 2012 թվական՝ Ուրուգվայ (A/HRC/22/53/Add.3)

Ռասիզմի ժամանակակից ձևերի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության հարցերով հատուկ զեկուցող

➞ 2011 թվական՝ Հունգարիա (A/HRC/20/33/Add.1)

Կանանց դեմ ուղղված բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցող

➞ 2011 թվական՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (A/HRC/17/26/Add.5)

➞ 2010 թվական՝ էլ Սալվադոր (A/HRC/17/26/Add.2) և Ալժիր (A/HRC/17/26/Add.3)

Ահաբեկչության դեմ պայքարի պայմաններում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցող

➞ 2011 թվական՝ Թունիս (A/HRC/16/51/Add.2)

2. **Զեկույցներ հետագա հսկողության միջոցառումների մասին:** Որոշ մանդատների ներքո հրապարակվում են հետագա հսկողության միջոցառումների մասին զեկույցներ, որոնք հիմնված են տվյալ երկրի կառավարության, մարդու իրավունքների պաշպանության ազգային հաստատությունների և քաղաքացիական հասարակության կողմից տրամադրված տեղեկությունների վրա: Երկրներ կատարած այցելություններին հաջորդող հետագա միջոցառումների մասին զեկույցների ներկայացման հետաքրքրական գործելակերպ է մշակվել Բռնի կամ ոչ կամավոր անհետացումների հարցերով աշխատանքային խմբի, Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողի, Արտադատարանային, պարզեցված ընթացակարգով կամ կամայական կերպով նշանակված մահապատիժների հարցերով հատուկ զեկուցողի, Մարդու իրավունքների և ծայրահեղ աղքատության հարցերով հատուկ զեկուցողի, ինչպես նաև Կրոնի և հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի կողմից:

Բռնի կամ ոչ կամավոր անհետացումների հարցերով զբաղվող աշխատանքային խմբի պատրաստած զեկույցներ հետագա միջոցառումների մասին

2010 թվականին Բռնի կամ ոչ կամավոր անհետացման հարցերով զբաղվող աշխատանքային խումբն ընդունեց մի ձևաչափ հետագա գործողությունների մասին իր զեկույցների համար և կազմակերպեց կլոր սեղաններ, որոնց շրջանակներում արծարծվեցին աշխատանքային խմբի կողմից տրված հանձնարարականները, տվյալ երկրի այցելության պահի դրությամբ այնտեղ տիրող իրավիճակի ամփոփ նկարագիրը, ինչպես նաև աշխատանքային խմբի կողմից պետական և ոչ պետական աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա ձեռնարկված քայլերի հակիրճ ներկայացումը: Այդ պահից անցած ժամանակահատվածում Աշխատանքային խումբը ներկայացրել է հետագա միջոցառումների մասին զեկույցներ, որոնք նվիրված են եղել բռնի անհետացումների հետ կապված իրավիճակում արձանագրած առաջընթացին և ծառացած խոչընդոտներին՝ Կոլումբիա, էլ Սալվադոր, Գվատեմալա, Հոնդուրաս, Մարոկկո և Նեպալ կատարած այցելություններից հետո:

Կրոնի կամ հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի կողմից պատրաստված հետագա հսկողության վերաբերյալ տեղեկություններ պարունակող աղյուսակներ

Կրոնի կամ հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցողը համապատասխան երկրներ կատարած այցելություններից հետո ուղարկում է հետագա հսկողության մասին նամակներ, որոնցում խնդրում է թարմ տեղեկություններ ներկայացնել նախկինում տրված հանձնարարականների ազգային մակարդակով կենսագործման վերաբերյալ: 2005 թվականից ի վեր այցելած պետություններում հետագա հսկողության վերաբերյալ տեղեկություններ պարունակող աղյուսակներում ներկայացվում են այն երկրներ կատարած այցելությունների մասին զեկույցներից վերցված եզրակացություններ ու հանձնարարականներ, ինչպես նաև հետագա հսկողության միջոցառումների վերաբերյալ ՄԱԿ-ի փաստաթղթերից, այդ թվում՝ համընդհանուր պարբերական դիտարկումից, հատուկ ընթացակարգերից և համաձայնագրային մարմիններից ստացված տեղեկություններ:[22]

3. Այցելություններին հաջորդող միջոցառումներ: Ազգային, տարածաշրջանային և միջազգային միջոցառումները, որոնք հաջորդում են երկիր կատարած այցելություններին, անկախ այն բանից, թե արդյոք դրանք իրականացվում են հատուկ ընթացակարգերի, կառավարությունների, մարդու իրավունքների հարցերով զբաղվող ազգային հաստատությունների, քաղաքացիական հասարակության, թե ՄԻԳՀԳ-ի կողմից, կարող են օգտակար լինել արձանագրած առաջընթացը գնահատելու, ինչպես նաև տվյալ երկիր կատարած այցելությունների արդյունքում տրված հանձնարարականների կենսագործման հարցում ունեցած փորձով կիսվելու և ծառացած մարտահրավերներն արծարծելու առումով: Նման միջոցառումները կարող են իրականացվել կլոր սեղանների, փորձագիտական հանդիպումների և կոնֆերանսների տեսքով:

22 www.ohchr.org/EN/Issues/FreedomReligion/Pages/Visits.aspx

Ստրկության հիմնախնդրին նվիրված աշխատաժողով Մավրիտանիայում

2013 թվականի հունվարին ստրկության ժամանակակից ձևերի հարցերով հատուկ զեկուցողը մասնակցեց Մավրիտանիա կատարած այցելությունից հետո տրված հանձնարարականների կենսագործման հետագա հսկողությանը նվիրված աշխատաժողովին: Աշխատաժողովին ներկա պետական պաշտոնատար անձինք և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները մշակեցին մի ճանապարհային քարտեզ, որը կոչված էր ապահովել հատուկ զեկուցողի կողմից ներկայացված հանձնարարականների կենսագործումը: Մավրիտանիայում ՄԻԳՀԳ-ի գրասենյակը համագործակցել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ խրախուսելով կառավարությանն ընդունել և կյանքի կոչել այս ճանապարհային քարտեզը:

Չիլիի և Արգենտինայի տեղաբնիկ ժողովուրդների դրության վերաբերյալ ներկայացված եզրակացությունների տարածում

2010 թվականին հունվարին տեղաբնիկ ժողովուրդների մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված իրավիճակի հարցերով հատուկ զեկուցողն անցկացրեց տեսակոնֆերանս, որը նվիրված էր Չիլիում տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներին: ՔՀԴ-ների և Հարավային Ամերիկայի ՄԻԳՀԳ-ի տարածաշրջանային գրասենյակի աջակցությամբ անցկացված այս տեսակոնֆերանսը միաժամանակ հեռարձակվեց Չիլիի հինգ քաղաքներում: Իր ներկայացման մեջ հատուկ զեկուցողը պարզաբանումներ ներկայացրեց իր եզրակացությունների և դիտողությունների վերաբերյալ, որոնք արտացոլվել էին տվյալ երկրին նվիրված իր զեկույցում:

2012 թվականին հատուկ զեկուցողը նույն տեսակոնֆերանսով հանդես եկավ Արգենտինայում, որտեղ այդ միջոցառումը կազմակերպվեց երկրում ՄԱԿ-ի ներկայացուցչության կողմից:

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

► Այցելությունների հրավերներ

- Առաջարկել մանդատակիր մարմիններին իրենց երկիրն այցելելու խնդրանք ներկայացնել և տրամադրել առարկայական տեղեկություններ նման այցելությունը հիմնավորելու համար:
- Տեղեկանալ այցելությունների մասին առկախ խնդրանքների մասին ՄԻԳՀԳ-ի կողմից քաղաքացիական հասարակությանը էլեկտրոնային փոստով հայտնած թարմ տեղեկություններից:
- Այցելությունների մասին խնդրանքները բավարարելու համար ջատագովման աշխատանքները հասցեագրել կառավարությանը, ինչպես համապատասխան այլ շահառուներին (օրինակ՝ խորհրդարանականներին, դիվանագիտական առաքելություններին):

► Մասնակցել կրկնակի հսկիչ այցելությունների պատրաստմանն ու իրականացմանը:

► Տեղեկություններ տրամադրել հետագա հսկողության միջոցառումների մասին զեկույցների համար :

► Առաջարկել, իսկ հնարավորության դեպքում՝ կազմակերպել հետագա հսկողության միջոցառումներ, ինչպես նաև մասնակցել դրանց:

Հաղորդագրություններին հաջորդող հետագա միջոցառումներ

Յուրաքանչյուր պարբերական նիստին Մարդու իրավունքների խորհրդին բոլոր հատուկ ընթացակարգերի կողմից ներկայացվում են իրենց ստացված հաղորդագրությունների մասին համատեղ զեկույցներ: Ստացված հաղորդագրությունների մասին զեկույցները, որոնք ներկայացվում են տարին երեք անգամ, ընդգրկում են համապատասխան պետությանը կամ այլ մարմնին ներկայացված հայտարարություններ-

րի հակիրճ նկարագրեր: Ուղարկված հաղորդագրությունների, ինչպես նաև կառավարությունների կողմից դրանց տրված պատասխանների տեքստը կարելի է գտնել բերված հղումներով: Հնարավոր է, որ հատուկ ընթացակարգերի ներքո ստացվեն և քննության առնվեն լրացուցիչ տեղեկություններ մի այնպիսի դեպքի վերաբերյալ, որի առնչությամբ հաղորդագրություն է ներկայացվել: Լրացուցիչ տեղեկությունները սովորաբար ստացվում են այն նույն աղբյուրներից, որոնք էլ ի սկզբանե ներկայացրել են բուն տեղեկատվությունը: 2012 թվականին հատուկ ընթացակարգերի ներքո լրացուցիչ տեղեկություններ են ստացվել ներկայացված հաղորդագրությունների 21 տոկոսի առնչությամբ:

Հատուկ ընթացակարգերի ներքո հետագա միջոցառումների մասին հաղորդագրությունները կարող են ներկայացվել այն դեպքերում, երբ իրավիճակի զարգացումներից ելնելով պահանջվում է նոր միջամտություն: Հետագա միջոցառումների մասին բազում հաղորդագրություններ հիմնված են ներկայացված լրացուցիչ տեղեկությունների վրա: 2012 թվականին ներկայացված հաղորդագրությունների 31 տոկոսը նվիրված է եղել հետագա միջոցառումների ընթացքին:

Միջոցառումների հետագա ընթացքին անդրադարձող հաղորդագրությունները ներկայացվում են նաև տվյալ երկիր կատարած այցելության ընթացքում, ինչպես նաև փոխանցվում են համապատասխան պետության դիվանագիտական ներկայացուցիչների հետ ունեցած խորհրդակցությունների միջոցով: Որոշ խորհրդանշական դեպքերում հատուկ ընթացակարգերի ներքո կարող են ներկայացվել մամլո հաղորդագրություններ:

Ներկայացված հաղորդագրությունների հետագա ընթացքի հսկողությունն ապահովում է մանդատակիր մարմինների տարեկան զեկույցներում ներկայացված դիտողությունների միջոցով: Այս դիտողությունները հիմնականում վերաբերում են այն միտումներին և օրինաչափություններին, որոնք ի հայտ են բերվել հաշվետու ժամանակահատվածում տվյալ երկրում, ինչպես նաև մի շարք առանձին դեպքերին:

Խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի կողմից պատրաստված դիտողությունների զեկույց

2010 թվականին իր մանդատի ստացման պահից հատուկ զեկուցողը ներկայացրել է դիտողությունների երկու զեկույց, որոնցում նա կրկին հնչեցրել է իր մտահոգությունները մարդու իրավունքների խախտումների առանձին դեպքերի առնչությամբ, մասնավորապես՝ ներկայացված հաղորդագրություններին կառավարությունների տրված պատասխանների լույսի ներքո:

Կամայական կալանավորման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի տվյալների շտեմարան

Կամայական կալանավորման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի տվյալների շտեմարանը, որը մեկնարկ առավ 2011 թվականին, իրենից ներկայացնում է հետազոտությունների իրականացման գործնական միջոց, որի օգնությամբ հնարավոր է որոնումներ իրականացնել 1991 թվականից ի վեր աշխատանքային խմբի կողմից ընդունված եզրակացություններում: Տվյալների շտեմարանը դյուրացնում է եզրակացությունների որակական և քանակական վերլուծությունը և կարող է օժանդակել կամայական կալանավորումից տուժած անձանց, մասնագետներին և այլ անձանց՝ կամայական կալանավորման ենթադրյալ դեպքերի առնչությամբ աշխատանքային խմբին բողոքների ներկայացման հարցում:[23]

Բռնի կամ ոչ կամավոր անհետացումների դեպքերի հետագա հսկողություն

Բռնի կամ ոչ կամավոր անհետացումների հարցերով զբաղվող աշխատանքային խումբը ձգտում է հաղորդակցման ուղիներ հաստատել խնդրո առարկա ընտանիքների և կառավարությունների միջև: Համապատասխան աղբյուրներից

[23] www.unwgaddatabase.org/un/

ստացված ցանկացած առարկայական լրացուցիչ տեղեկություններ, որոնք վերաբերում են վարույթում գտնվող գործին, փոխանցվում են խնդրո առարկա կառավարությանը: Տվյալ կառավարության կողմից առանձին դեպքերի առնչությամբ տրամադրված ցանկացած տեղեկատվություն փոխանցվում է բուն հաղորդագրությունը ներկայացրած աղբյուրներին: Աշխատանքային խումբը փոխանցում է անհետացած անձի ճակատագրի կամ գտնվելու վայրի առնչությամբ տվյալ պետության տրված պատասխանները հաղորդագրության ստացման բուն աղբյուրին՝ առաջարկելով վերջինիս դիտողություններ կամ լրացուցիչ մանրամասներ ներկայացնել: Եթե բուն աղբյուրից տվյալ հաղորդագրության ստացման պահից վեց ամսվա ընթացքում պատասխան չի ստացվում, կամ եթե տվյալ աղբյուրը հերքում է կառավարության կողմից տրամադրված տեղեկություններն այնպիսի հիմնավորմամբ, որն Աշխատանքային խմբի կողմից չի համարվում ողջամիտ, ապա գործը համարվում է պարզաբանված: Գործերը չեն փակվում մինչև դրանց պարզաբանումը, դադարեցումը կամ դրանք փակելու մասին համապատասխան որոշման կայացումը: Տարին մեկ անգամ Աշխատանքային խումբը խնդրո առարկա կառավարությանը հիշեցնում է ներկայացնում այն գործերի վերաբերյալ, որոնք դեռևս չեն պարզաբանվել, իսկ տարեկան երեք անգամ հիշեցնում է ուղարկում շտապ արձագանք պահանջող բոլոր այն գործերի առնչությամբ, որոնք ներկայացվել են Աշխատանքային խմբի ուշադրությանը դրա նախորդ նիստից անցած ժամանակահատվածում: Հնարավորության սահմաններում և ըստ պահանջի Աշխատանքային խումբը կարող է խնդրո առարկա կառավարությանը կամ բուն հաղորդագրության հեղինակին ներկայացնել թարմ տեղեկություններ առանձին դեպքերի վերաբերյալ: [24]

[24] Լրացուցիչ մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Աշխատանքային խմբի գործելակերպի վերանայված մեթոդները (A/HRC/10/9, Հավելված 1):

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

- Պարբերաբար ծանոթանալ ներկայացված հաղորդագրություններին մասին զեկույցներին՝ մտահոգիչ իրավիճակների և դեպքերի առնչությամբ ուղարկված հաղորդագրությունների մասին տեղեկանալու նպատակով:
- Ապահովել զեկույցների լայն տարածումը տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային ցանցերում՝ գործերի մասին լրացուցիչ տեղեկատվություն հավաքելու նպատակով:
- Նախկինում ներկայացված հաղորդագրության հետ կապված դրական կամ բացասական զարգացումների վերաբերյալ ներկայացնել թարմ տեղեկություններ:
- Վերանայել համապատասխան կառավարությունների կողմից ներկայացված պատասխանները և դրանց հետ կապված մեկնաբանություններն ուղարկել հատուկ ընթացակարգերին:
- Պարբերական կապեր հաստատել հատուկ ընթացակարգերի ներքո համապատասխան մանդատներով օժտված մարմինների հետ՝ ՄԻԳՀԳ-ի կազմում գործող դրանց աջակցության թիմերի միջոցով:
- Օգտագործել հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեն՝ urgent-action@ohchr.org կամ հատուկ ընթացակարգերի ներքո համապատասխան մանդատով օժտված մարմնի ընդհանուր էլեկտրոնային փոստի հասցեն: Հատուկ ընթացակարգերի շտեմարանը կարելի գտնել այստեղ՝

http://goo.gl/5qoNL

2012 թվականին ներկայացված հաղորդագրությունները և դրանց հաջորդած հետագա միջոցառումներն ըստ տարածաշրջանի



Թեմատիկ զեկույցներին հաջորդող հետագա միջոցառումներ

Ընդունված գործելակերպի շրջանակներում հատուկ ընթացակարգերը կազմակերպում են Մարդու իրավունքների խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային ուղղված թեմատիկ զեկույցների ներկայացման կամ քննարկման միջոցառումներ, կամ էլ մասնակցում են դրանց: Խոսքը կարող է գնալ Խորհրդի նիստերին կից անցկացվող միջոցառումների, ինչպես նաև այլ աշխատաժողովների կամ կոնֆերանսների մասին: Ընդունված է նաև մամլո հաղորդագրություններ կամ համացանցում հրապարակված պատմություններ ներկայացնել, ինչպես նաև անցկացնել զեկույցի թեմային նվիրված մամլո ասուլիսներ: Թեմատիկ միջազգային օրերը կարող են լավ առիթ դառնալ թեմատիկ զեկույցներում արծարծված մարդու իրավունքների հիմնախնդիրներին լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրելու համար:

Համացանցային գործիքներ՝ կրոնի կամ հավատքի ազատությանը վերաբերող նյութերի ժողովածու և խոշտանգումների դեմ պայքարի նախաձեռնություն

Կրոնի կամ հավատքի թեմային նվիրված նյութերի ժողովածու

2011 թվականին նշվեց կրոնի կամ հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի մանդատի ստեղծման 25-րդ տարելիցը: Այս կապակցությամբ ներկայացվեց Կրոնի կամ հավատքի թեմային նվիրված նյութերի ժողովածուն, որում ներկայացված են 1986 թվականից ի վեր մանդատակիր մարմիններից ստացված դիտողություններն ու հանձնարարականները: Նյութերի այս ժողովածուն, որը նախատեսված է որպես ջատագովման, կրթության և հետազոտությունների գործիք, ներառում է 1986-ից 2011 թվականն այս մանդատի ներքո ներկայացված զեկույցներից ըստ թեմաների դասակարգված քաղվածքներ:[25]

Խոշտանգումների դեմ պայքարի նախաձեռնություն

2013 թվականին խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը մեկնարկ տվեց առցանց հարթակին, որում ներկայացված էին տեղեկություններ հետագա հսկողության գործողությունների վերաբերյալ, այդ թվում՝ բոլոր թեմատիկ, առանձին երկրներին նվիրված և դիտողություններ պարունակող զեկույցները, բացի այդ ներկայացվել են մամլո հաղորդագրություններ, հարցազրույցներ, կոնֆերանսներ, դատական լսումների նյութեր, անկախ եզրակացություններ, ինչպես նաև լրատվամիջոցներում լուսաբանված այլ թեմաներ, որոնք առնչվում են երկիր կատարած այցելություններին և թեմատիկ զեկույցներին հաջորդած հետագա հսկողության աշխատանքներին: [26]

[25] www.ohchr.org/EN/Issues/FreedomReligion/Pages/Standards.aspx

[26] ttp://antitorture.org

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

- Մարդու իրավունքների խորհրդի նիստերին կից կազմակերպել[27] միջոցառումներ նվիրված թեմատիկ զեկույցի առարկային, կամ էլ մասնակցել նման միջոցառումներին:
- Մեջբերել թեմատիկ զեկույցներում զետեղված եզրակացություններն ու հանձնարարականները՝ ՔՀՊ-ների գործունեությունը (օրինակ՝ ջատագովման աշխատանքները, կարողությունների ձևավորումը, իրազեկման բարձրացումը և մոնիթորինգը) ամրապնդելու նպատակով:

5.4. Համընդհանուր պարբերական դիտարկում

Համընդհանուր պարբերական դիտարկման առաջին ցիկլն ավարտվեց 2011 թվականի հոկտեմբերին, երբ ՄԱԿ-ի բոլոր մասնակից պետություններն արդեն դարձել էին նման դիտարկման առարկա: Դիտարկման երկրորդ և հետագա ցիկլերում պետություններից ակնկալվում է տեղեկություններ տրամադրել առաջին դիտարկման մեջ ներկայացված հանձնարարականների կենսագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև այլ զարգացումների վերաբերյալ: Բացի այդ, Մարդու իրավունքների խորհրդի օրակարգի 6-րդ կետով, որը նվիրված է ՀՊԴ-ի հարցերին, կարող են պարբերաբար ներկայացվել թարմ տեղեկություններ: Ինչպես պետությունները, այնպես էլ հասարակական կազմակերպությունները կարող են թարմ տեղեկություններ ներկայացնել միջանկյալ զեկույցների, ինչպես նաև բանավոր և գրավոր հայտարարությունների միջոցով:

[27] Ուղեկից միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունը վերապահված է միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնք ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի խորհրդում հանդես են գալիս խորհրդակցական կարգավիճակով:

Կոլումբիայում ՀՊԴ-ի դրույթների կենսագործման վերաբերյալ Մարդու իրավունքների խորհրդին ներկայացվող զեկույցներ

Կոլումբիայի իրավագետների հանձնաժողովը պարբերաբար թարմ տեղեկություններ է հաղորդում Մարդու իրավունքների խորհրդին վերջինիս օրակարգում ՀՊԴ-ին նվիրված 6-րդ կետի ներքո անցկացվող ընդհանուր բանավեճի շրջանակներում: Կոլումբիայի իրավագետների հանձնաժողովը նման թարմ տեղեկությունների միջոցով զեկուցում է Կոլումբիայի կառավարության կողմից ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների կենսագործման ուղղությամբ արձանագրած առաջընթացի մասին:

Ինչպե՞ս կարող է մասնակցել քաղաքացիական հասարակությունը

- Շահառուների զեկույցի ամփոփագրի համար համապատասխան տեղեկություններ ներկայացնելիս կարևոր է ներառել այն հարցի վերլուծությունը, թե արդյոք տվյալ պետությունը կենսագործել է առաջին ցիկլում ներկայացված հանձնարարականները, թե ոչ, իսկ եթե այո, ապա ինչպես է նա արել այդ:
- ՔՀԴ-ները կարող են տրամադրել դիտարկումն իրականացրած պետություններին, մասնավորապես, այն պետություններին, որոնք ձևակերպել են առաջին դիտարկման շրջանակներում ներկայացված հանձնարարականները, խնդրո առարկա պետության կողմից կենսագործման ուղղությամբ արձանագրած առաջընթացի իրենց վերլուծությունը:
- Այն հասարակական կազմակերպությունները, որոնք ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի խորհրդի կազմում օժտված են խորհրդատվական կարգավիճակով, կարող են օգտվել Մարդու իրավունքների խորհրդի օրակարգի 6-րդ կետով նախատեսված բանավոր և գրավոր հայտարարություններ ներկայացնելու հնարավորությունից՝ ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների կենսագործման կապակցությամբ արձանագրած առաջընթացի և ծառացած մարտահրավերների վերաբերյալ թարմ տեղեկություններ հայտնելու նպատակով:

Այս մարմիններում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ ուղեցույցը կարելի է գտնել ՄԻԳՀԳ-ի կողմից պատրաստած «Ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար՝ աշխատանք ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող ծրագրի հետ» և «Գործնական ձեռնարկ Համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ» հրապարակումներում:[28]

ՀՊԴ-ի հետագա հսկողության գործիքներ

«UPR-Info» հասարակական կազմակերպությունը մշակել է գործիքներ ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականների կենսագործումը դյուրացնելու, խթանելու և մշտադիտարկելու համար: Մասնավորապես.

➞ Հետագա հսկողության ծրագիրը, որի շրջանակներում քննության է առնվում հանձնարարականների կենսագործումն առաջին ցիկլի ավարտից երկու տարի անց (կենսագործման միջանկյալ գնահատում) և համեմատություն է անցկացվում մի կողմից՝ առաջին ցիկլի շրջանակներում ներկայացված հանձնարարականների և ստանձնած պարտավորությունների, իսկ մյուս կողմից՝ ՀՊԴ-ի երկրորդ ցիկլի շրջանակներում պետության կողմից հանձնարարականների և պարտավորությունների կատարման վերաբերյալ տրամադրված տեղեկությունների միջև:

➞ ***«Կենսագործման ճանապարհին»*** խորագրով ուսումնասիրությունը, որի շրջանակներում վերլուծվում են հետագա հսկողության ծրագրի միջոցով ստացված տեղեկություններն ու տվյալները, քննության է առնում 66 երկրներին հասցեագրված 6.542 հանձնարարականներից 3.294-ի կենսագործման ընթացքը:

➞ **Քաղաքացիական հասարակության համար նախատեսված գործիքների ժողովածուն** առաջարկում է հինգ միջոցառումներ. 1. Հրապարակել ՀՊԴ-ում զետեղված հանձնարարականներն ու պարտավորությունները: 2. Պլանավորել հանձնարարականների կենսագործման ընթացքը: 3. Երկխոսություն հաստատել քննության

[28] Կարելի է գտնել այստեղ՝www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

առարկա հանդիսացող պետության հետ՝ հանձնարարականների հետագա կենսագործմանը մասնակցելու համար: 4. Մշտադիտարկել կենսագործման ընթացքը: 5. Զեկույցներ ներկայացնել կենսագործման ընթացքի վերաբերյալ:[29]

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հրապարակեց մի **գործնական ձեռնարկ**, որը նվիրված էր ՀՊԴ-ի շրջանակներում ներկայացված հանձնարարականների և ստանձնած պարտավորությունների կենսագործման թեմային: Ձեռնարկն առաջին հերթին նախատեսված է պետությունների համար, ինչպես նաև անդրադառնում է այլ շահառուներին, այդ թվում՝ ՔՀԴ-ներին, որոնք հանդես են գալիս որպես պետությունների գործընկերներ հանձնարարականների կատարման հետագա հսկողության գործում: Ըստ ձեռնարկի՝ կենսագործումն առաջարկվում է իրականացնել 10 քայլերից բաղկացած ծրագրի միջոցով.

1. Հավաքել համապատասխան տեղեկություններ:
2. Խմբավորել տեղեկություններն ըստ թեմաների:
3. Սահմանել հանձնարարականներից բխող և ակնկալվող գործողություններն ու արդյունքները:
4. Սահմանել կենսագործմանն ուղղված միջոցառումները:
5. Յուրաքանչյուր բաժնի համար որդեգրել միասնական մոտեցում:
6. Կենսագործման համար պատասխանատուներին նշանակել պետական մակարդակով:
7. Կենսագործման համար գործընկերներ գտնել ազգային մակարդակով:
8. Սահմանել կենսագործման ժամկետները:
9. Որոշել կարողությունների ձևավորման և տեխնիկական աջակցության կարիքները, ինչպես նաև կենսագործման համար գործընկերներ գտնել միջազգային մակարդակով:
10. Կենսագործման շրջանակներում մշակել հետագա հսկողության և գնահատման ռազմավարություն: [30]

[29] www.upr-info.org/followup/

[30] www.francophonie.org

5.5. Համընդգրկուն մոտեցում

Այս բաժնում տարբեր մեխանիզմների կողմից մշակված հետագա հսկողության ընթացակարգն ու գործելակերպը ներկայացված է առանձին, քանի որ առկա նմանություններից անկախ՝ այն կազմում է յուրաքանչյուր մեխանիզմի առանձնահատկությունը:

Այնուամենայնիվ, կարևոր է ևս մեկ անգամ կրկնել, որ հետագա հսկողության գործընթացն ավելի արդյունավետ է, եթե այն իրականացվում է համընդգրկուն եղանակով՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմների կողմից տրված հանձնարարականների փոխադարձ ամրապնդումը և առավելագույնի հասցնելով դրանց կենսագործման ներուժը: Տե՛ս նաև սույն ուղեցույցի 3-րդ բաժինը:

5.6. Ճնշամիջոցներ

Մարդու իրավունքների ոլորտում գործող ՄԱԿ-ի մարմինների, ներկայացուցիչների և մեխանիզմների հետ համագործակցող կամ արդեն համագործակցած անհատների և խմբերի նկատմամբ գործադրվող ճնշամիջոցները համարվում են մարդու իրավունքների խախտումներ: Ճնշամիջոցները կարող են ի հայտ գալ նաև այն ժամանակ, երբ քաղաքացիական հասարակությունը ձգտում է համագործակցել մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մեխանիզմների հետ հետագա հսկողության միջոցառումների շրջանակներում:

Մարդու իրավունքների խորհրդի թիվ 12/2 բանաձևի ներքո Գլխավոր քարտուղարին հանձնարարվեց Խորհրդին ներկայացնել տարեկան զեկույց, որում պետք է ընդգրկվեր մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մեխանիզմների հետ համագործակցող անձանց դեմ ուղղված ենթադրյալ ճնշամիջոցների նկարագիրն ու վերլուծությունը, ինչպես նաև պետք է ներկայացվեին հանձնարարականներ առ այն, թե ինչպես անդրադառնալ ահաբեկման և ճնշամիջոցների գործադրման հիմնախնդիրներին:[31]

[31] 2012 և 2011 թվականների զեկույցների առնչությամբ տե՛ս թիվ A/HRC/21/18 և թիվ A/HRC/18/19 փաստաթղթերը:

Բացի այն դեպքերից, երբ ճնշամիջոցները պայմանավորված են Խորհրդի, հատուկ ընթացակարգերի և համաձայնագրային մարմինների, այդ թվում՝ հետագա հսկողություն ընթացակարգերի և մեխանիզմների հետ ունեցած համագործակցությամբ, նշված զեկույցում կարող են ընդգրկվել տեղեկություններ այն ճնշամիջոցների վերաբերյալ, որոնք պայմանավորված են ՄԻԳՀԳ-ի, դրա դաշտային ներկայացուցչությունների և մարդու իրավունքների գծով խորհրդականների, տվյալ երկրում ՄԱԿ-ի ներկայացուցչության, խաղաղապահ առաքելությունների մարդու իրավունքների հարցերով զբաղվող բաժինների և այլ մարդու իրավունքների հետ ունեցած համագործակցությամբ: Նախկին զեկույցներում լուսաբանված դեպքերի հետագա հսկողության համար համապատասխան տեղեկությունների ներկայացումը նույնպես կարևորվում և խրախուսվում է:

Ճնշամիջոցները կարող են գործադրվել այն անձանց նկատմամբ, ովքեր.

- ձգտում են համագործակցել կամ արդեն համագործակցել են մարդու իրավունքների ոլորտում գործող ՄԱԿ-ի մարմինների, ներկայացուցիչների և մեխանիզմների հետ, կամ էլ նրանց նկատմամբ, ովքեր նշված մարմիններին տվել են վկայություն կամ տեղեկատվություն,
- օգտվում են կամ արդեն օգտվել են ՄԱԿ-ի հովանու ներքո մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար ստեղծված ընթացակարգերից կամ մատուցել են իրավական կամ այլ բնույթի աջակցություն այդ նպատակով,
- ներկայացնում են կամ արդեն ներկայացրել են հաղորդագրություններ մարդու իրավունքների փաստաթղթերի ներքո ստեղծված ընթացակարգերով և (կամ) տրամադրել են իրավաբանական կամ այլ բնույթի աջակցություն այդ նպատակով,
- հանդիսանում են մարդու իրավունքների խախտումներից տուժած անձանց կամ վերջիններիս իրավաբանական կամ այլ բնույթի աջակցություն ցուցաբերած անձանց ազգականներ:

Ճնշամիջոցների գործադրման դեպքերի հրապարակումը Գլխավոր քարտուղարի զեկույցի միջոցով կարող է բերել այդ անձանց պաշտպանության բարձրացմանը: Այդուհանդերձ, հարկ է հանգամանալից կերպով գնահատել այդ դեպքերի հրապարակման հետ կապված ռիսկերը: Այդ իսկ պատճառով զեկույցում պետք է ընդգրկեն միայն այն դեպքերը, որոնց վերաբերյալ խնդրո առարկա անձանց կողմից ստացվել է այդ նյութերը հրապարակելու իրազեկված համաձայնություն:

Ճնշամիջոցների գործադրման փաստերի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու համար կարող եք կապվել՝

reprisals@ohchr.org

6. Իմացե՞ք ավելին

► ՄԻԳՀԳ-ի կայքէջ՝

www.ohchr.org

► ՄԻԳՀԳ-ի գործիքները քաղաքացիական հասարակության համար կարելի է գտնել այստեղ՝

www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx
ՄԱԿ-ի 6 պաշտոնական լեզուներով

► Մարդու իրավունքների համընդհանուր համաթիվ

http://uhri.ohchr.org/

► Մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային ծառայության և Մարդու իրավունքների իրավաբանական կենտրոնի կողմից պատրաստած **«Domestic implementation of UN human rights recommendations – A Guide for human rights defenders and advocates»** խորագրով հրապարակումը կարելի է գտնել այստեղ՝

www.ishr.ch

► «UPR-info» կազմակերպության կողմից մշակած հետագա հսկողության գործիքները կարելի է գտնել այստեղ՝

www.upr-info.org/followup

►«La Francophonie» կազմակերպության կողմից մշակած «Practical Guide on the Universal Periodic ReviewUPR-info» (2013թ.) կարելի է գտնել այստեղ՝

www.francophonie.org

► «From judgement to justice – Implementing international and regional human rights decisions», 2010թ. և **«From rights to remedies: structures and strategies for implementing international human rights decisions»** (2013թ.) կարելի է գտնել այստեղ՝

www.opensocietyfoundations.org

► Համացանցային հեռարձակում

- **ՄԱԿ-ի համացանցային հեռուստատեսություն.**

http://webtv.un.org

- Համաձայնագրային մարմինների նիստեր՝

www.treatybodywebcast.org.

► Ձեռնարկ գործնական աշխատանքում ներգրավված մասնագետների համար բժշկական խնամքի ներքո գտնվող հիվանդների մարդու իրավունքների վերաբերյալ

http://health-rights.org/

► Դեպքերի ուսումնասիրություններ ԵԻԿ-ի եզրափակիչ դիտողությունների հետագա հսկողությանն ուղղված գործողություններին վերաբերյալ՝

www.childrightsnet.org/NGOGroup/CRC/FollowUp/

► Կամայական կալանավորման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի տվյալների շտեմարան՝

www.unwgaddatabase.org/un/

► Կրոնի կամ հավատքի ազատության թեմային նվիրված նյութերի համառոտ ժողովածու

www.ohchr.org/EN/Issues/FreedomReligion/Pages/Standards.aspx

Որոշ հասարակական կազմակերպություններ սերտորեն ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանության առանձին մեխանիզմների աշխատանքում: Այդ կազմակերպությունները դյուրացնում են և սատարում ՔՀԴ-ների ներգրավումը նշված մեխանիզմների աշխատանքում և կարող են մատուցել ուղղորդում և աջակցություն: Այդ հասարակական կազմակերպություններից են.

► ՔՔԻՄԴ-ի ներքո գործող Քաղաքացիական և քաղաքական իրավունքների հարցերով զբաղվող կենտրոնը (ՔՔԻԿ)

ԵԻԿ-ի ներքո գործող «Child Rights Connect» կազմակերպությունը

- ՀԱԻԿ-ի ներքո գործող Հաշմանդամության հարցերով միջազգային դաշինքը
- ՌԽՎԿ-ի ներքո գործող Խտրականության և ռասիզմի բոլոր ձևերի դեմ ուղղված միջազգային շարժումը (ԽՌԴՄՇ)
- ԿՄԱ-ի ներքո գործող Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիայի հարցերով միջազգային հարթակը (ՄԱԿՄՀ)

  ԽԴԿ-ի ներքո գործող Խոշտանգումների զոհերի վերականգման հարցերով միջազգային խորհուրդը (ԽՁՎՄԽ)
- ԿԴԽՎԿ-ի ներքո գործող Կանանց իրավունքների հարցերով դիտարկումների և գործողությունների միջազգային կոմիտեն (Խաղաղօվկիանոսային ջրավազանի ասիական երկրների տարածաշրջան)
- ՀՊԴ-ի ներքո գործող «UPR-Info» կազմակերպությունը

7. Կապվե՞ք մեզ հետ

ՄԻԳՀԳ-ի քաղաքացիական հասարակության հարցերով զբաղվող բաժնի հետ կարելի կապվել հետևյալ հասցեով՝

civilsociety@ohchr.org

Հեռախոս՝ +41(0) 22 917 9656

Քաղաքացիական հասարակության համար ՄԻԳՀԳ-ի կողմից պատրաստած մարդու իրավունքներին վերաբերող ձեռնարկներն ու գործնական ուղեցույցները կարելի է գտնել առցանց արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով այստեղ՝ www.ohchr.org/EN/AboutUs/Pages/CivilSociety.aspx

Էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը տրամադրում է թարմ տեղեկություններ և ուղղորդում մարդու իրավունքների ոլորտում գործող մանդատակիր կառույցների և մեխանիզմների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ է հայտնում ֆինանսավորման, դրամաշնորհների և կրթաթոշակների ստացման համար դիմումների ներկայացման վերջնաժամկետների վերաբերյալ: Բաժանորդագրվելու համար կարող եք այցելել քաղաքացիական հասարակության հարցերով զբաղվող բաժնի կայքէջը կամ անցել հետևյալ հղումով՝

http://goo.gl/O8snt

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի 20-րդ տարելիցի առթիվ

«Քաղաքացիական հասարակությունը զարգացել և ընդլայնվել է ծնունդ տալով մարդու իրավունքների խնդիրներով ակտիվորեն զբաղվող կազմակերպություններին և իրավապաշտպաններին, որոնց թիվն այսօր ավելի մեծ է քան 20 տարի առաջ: Այս կազմակերպություններն ու անհատները կյանք են հաղորդում մարդու իրավունքների պաշտպանության գործին, քանզի հենց նրանք են խթանում փոփոխությունները, հենց նրանք են տագնապ հնչեցնում չարաշահումների, վատ օրենքների և աննկատ տարածվող ավտորիտարիզմի վերաբերյալ:

ՄԻԳՀԳ-ի 20-րդ տարելիցի առթիվ հրապարակվող այս գործնական ձեռնարկը նվիրված է ողջ աշխարհում հանուն մարդու իրավունքների աշխատող քաղաքացիական հասարակության դերակատարներինե:

Նավի Փիլայ
Մարդու իրավունքների հարցերով
Միավորված ազգերի կազմակերպության
գերագույն հանձնակատար
2014թ. հոկտեմբեր

UNITED NATIONS HUMAN RIGHTS OFFICE OF THE HIGH COMMISSIONER | 20 YEARS WORKING FOR YOUR RIGHTS 1993 WORLD CONFERENCE ON HUMAN RIGHTS

Գործնական ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

Ազգերի պալատ,
Ժնև 10, Շվեյցարիա 1211
Հեռ՝ +41 (0)22 917 90 00
Ֆաքս՝ +41 (0) 22 917 90 08
Վեբ կայք՝ www.ohchr.org

UNITED NATIONS HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER

20 YEARS WORKING FOR YOUR RIGHTS
1993 WORLD CONFERENCE ON HUMAN RIGHTS